Azg
armenian daily
28 ՆՈՅԵՄԲԵՐ 2001 ՇԱԲԱԹ 218 (2422)

Անկարայում սպասում են Քոլին Փաուելին

ՍՏԱՄԲՈՒԼ, 27 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Դեկտեմբերի 4-5-ը Անկարայում է գտնվելու ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը: Պետքարտուղարի այցը Անկարա թուրքական «Հյուրիեթ» թերթը կապում է Աֆղանստանում ծավալվող վերջին իրադարձությունների հետ, որտեղ առանձին նշանակություն է տրվում Թուրքիայի դերին: Թուրքիայում գտնում են, որ ԱՄՆ-ն առավել շահագրգռված է այս հանդիպման մեջ, եւ սպասվում է, որ հանդիպման օրակարգի առաջնահերթ քննարկման խնդիր է լինելու Աֆղանստանում իրականացվող ռազմական գործողության, ինչպես նաեւ հետպատերազմյան շրջանում Աֆղանստանի քաղաքական դրության հարցը: Թերթը նշում է, որ Քոլին Փաուելի եւ Թուրքիայի արտգործնախարար Իսմայիլ Ջեմի հանդիպմանը նախարարները կանդրադառնան ԱՄՆ-ի եւ Թուրքիայի կողմից Իրաքի դեմ ուղղված հավանական ռազմական գործողությունների հարցին, ինչպես նաեւ Կիպրոսի խնդրին, որը վերջերս առանձնակի սրություն է ստացել:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Սփյուռքի եւ Հայաստանի ռամկավարները փառատոնի նշեցին իրենց հոբելյանը

Երեկ Ռամկավար Ազատական կուսակցության 80-ամյակի եւ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հայրենիքում վերընձյուղման 10-ամյակի հոբելյանական տոնակատարությունների գլխավոր օրն էր, որն սկսվեց դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր հանդիսավոր երթով, այնուհետեւ շարունակվեց Թեմելյան կենտրոնում կայացած սփյուռքի եւ Հայաստանի ռամկավար ներկայացուցիչների խորհրդակցական նիստով եւ ավելի ուշ եզրափակվեց Օպերայի դահլիճում հանդիսավոր նիստով եւ անմոռանալի համերգով:

Հարգանքի տուրք եղեռնի զոհերի հիշատակին

Ռամկավար Ազատական կուսակցության հիմնական գաղափարախոսություններից մեկը եղել եւ մնում է Հայ դատի հետապնդումը, եւ բնական էր, որ սփյուռքից ժամանած ռամկավարներն իրենց պարտքը համարեցին այցելել դարասկզբի ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող: Հոբելյանի առիթով աշխարհի տարբեր երկրներից Հայաստան ժամանած ռամկավարները, Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավարները, մարզային կառույցների ներկայացուցիչները երեկ այցելեցին Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ դրեցին Ցեղասպանության զոհերի հուշարձանին, կուսակցության ղեկավարները մասնակցեցին ավանդական դարձած ծառատունկին: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, որը թուրքերի կատարած ոճրագործության ապացույցն է, թանգարան-ինստիտուտի տնօրեն Լավրենտի Բարսեղյանը հյուրերին ծանոթացրեց այստեղ պահվող պատմական նյութերին: Ցեղասպանության թանգարան էր եկել նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության հնագույն գործիչ, ամերիկահայ Սուրեն Աբրահամյանը: 94-ամյա հեղինակը թանգարան-ինստիտուտին նվիրեց «Վանից Դեպորտ. հայկական ցեղասպանությունից մազապուրծ» գիրքը, որի հայերեն թարգմանության շնորհանդեսը տեղի կունենա այսօր: Սուրեն Աբրահամյանը մեր օրերում այն քիչ մարդկանցից է, որ վերապրել է Հայոց ցեղասպանությունը:

ՄԱՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տես էջ 3

ԱՍՈՒԼԻՍ

Ռուսաստան-ԱՄՆ մերձեցումն ապացուցում է Հայաստանի կոմպլեմենտար քաղաքականության արդյունավետությունը

Վստահ է Վարդան Օսկանյանը

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

«Սեպտեմբերի 11-ից հետո պարզեցավ էր, որ ինչ-որ բան պիտի փոխվեր միջազգային հարաբերություններում: Նոր ձեւավորվող հարաբերությունների ուրվագծերն արդեն երեւում են: Եվ մեզ համար դրանցում թերեւս ամենակարեւորը Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հարաբերությունների մերձեցումն է», նշեց երեկ ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանն՝ անցնող տարին եւ իր այցերն ամփոփող մամլո ասուլիսին:

Պրն Օսկանյանը համոզմունք հայտնեց, որ 1991-ին ավարտված, բայց դեռ իներցիայով առաջ շարժվող սառը պատերազմին իսկապես վերջ կտրվի: Բայց երկու գերտերությունների հարաբերությունների ջերմացումը դրական արդյունք կտա ոչ միայն միջազգային համատեքստում, այլեւ, ըստ ՀՀ արտգործնախարարի, մեր տարածաշրջանում:

Այնպես որ, նոր ձեւավորված այս

իրավիճակում պրն Օսկանյանը կարեւորեց Հայաստանի վարած փոխլրացման՝ կոմպլեմենտար քաղաքականությունը: «Մենք արդեն քանի տարի վարում էինք փոխլրացման քաղաքականություն, որն այսօր ուրվագծում է իր կառուցողականությունը եւ կարող է դեռ ավելի արդյունավետ կիրառություն ստանալ»:

Տես էջ 2

ՀԱՍԱՐՈՍ

Սերժ Սարգսյանը նորից մեկնեց Մոսկվա

Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստին մասնակցելու նպատակով ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը Հավաքական անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Վ. Նիկոլայենկոյի հրավերով նոյեմբերի 27-ին մեկնում է Մոսկվա, տեղեկացնում է ՀՀ ՊՆ լրատվության եւ քարոզչության վարչությունը:

Վասիլի Ղազարյանը՝ դեսպան Չինաստանում

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նոյեմբերի 26-ին հրամանագիր է ստորագրել Վասիլի Ղազարյանին Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան նշանակելու մասին (նստավայրը՝ Պեկին): Վասիլի Ղազարյանը մինչ նոր նշանակումը զբաղեցնում էր ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի պաշտոնը:

Ռուսաստանի եւ Իրանի փոխարտգործնախարարները քննարկել են ղարաբաղյան խնդիրը

ՄՈՍԿՎԱ, 27 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մոսկվայում ավարտվել է Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Վյաչեսլավ Տրուբնիկովի եւ Իրանի փոխարտգործնախարար Մոհսեն Ամինզադեհի հանդիպումը: Ռուսաստանն ու Իրանը հանդես են եկել Աֆղանստանում լիակատար խաղաղություն հաստատելու եւ այս երկրի անվտանգությունն ապահովելու կոչով: Կողմերը լավատեսություն են արտահայտել Աֆղանստանի ապագայի առնչությամբ՝ կարեւորելով երկու երկրների դերը ճգնաժամը հաղթահարելու գործում: «Թեհրան թայմսի» հաղորդմամբ, Տրուբնիկովն ու Ամինզադեհը հանդիպման ընթացքում քննարկել են նաեւ ղարաբաղյան կարգավորման խնդիրը: «Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել տեսակետներ փոխանակել Ղարաբաղի վերաբերյալ, որը «կռվախնձոր է» Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ», նշում է թերթը:

Վ. Օսկանյանը վաղ է համարում Ղարաբաղ-Ադրբեջան սահմանին միջազգային խաղաղարար ուժերի տեղակայումը

Վերջին երեք տարիներին ԵԱՀԿ Մինսկի խումբը ղարաբաղյան կարգավորման մի քանի առաջարկներ է ներկայացրել, որոնք Ադրբեջանը մերժել է: **«Ազգը»** ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանին հարց ուղղեց՝ ժամանակը չէ՞ ԼՂՀ-ն հռչակել ՀՀ-ի անբաժանելի մաս եւ այդ մասին հայտարարել ի լուր աշխարհի:

Պրն Օսկանյանի պատասխանը հետեւյալն էր. «Չէ՛, դեռ մի քիչ էլ սպասենք, մի քանի տարբերակներ էլ առաջարկեն»: Մենք, նկատելով արտգործնախարարի դեմքի արտահայտությունը, նշեցինք, որ հարցը տալիս ենք լրջորեն: «Ես լուրջ եմ պատասխանում», ասաց Վ. Օսկանյանը:

«Գոլոս Արմենիի» թղթակիցը հարցրեց. «Այսօր որքանո՞վ եք իրական համարում ԼՂՀ-Ադրբեջան սահմանին միջազգային խաղաղարար ուժերի տեղակայումը, նման հարց շոշափվո՞ւմ է»: Վարդան Օսկանյանը պատասխանեց. «Դեռ վաղ է դրա մասին խոսել, նման հարց օրակարգում չկա»:

Թ. Հ.

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Պարտքերը մարելու ինգորյա ժամկետ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ անցկացրել է աշխատանքային խորհրդակցություն՝ կապված էներգետիկայի ոլորտի պրոբլեմային խնդիրների հետ: Խորհրդակցությանը հրավիրվել էին շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարները:

Դեռեւս հոկտեմբեր ամսին էներգետիկայի նախարարությունում անցկացրած խորհրդակցության ընթացքում անդրադառնալով էլեկտրաէներգիայի դիմաց վարձավճարների հավաքման ընթացքում ծագող խնդիրներին, հանրապետության նախագահը հանձնարարել էր կազմել վճարումներից խուսափողների ցանկը: Պարտքի կուտակածների թվում կան տարբեր ոլորտների պաշտոնատար անձինք: Նախագահը նշել է, որ նրանց նկատմամբ վերաբերմունքը հատկապես խիստ է լինելու: Ընդգծելով, որ սոցիալապես անապահով խավը հիմնականում կատարում է վճարումները, Ռոբերտ Քոչարյանն ասել է, որ պարտքը կուտակողները մարդիկ են, ովքեր հնարավորություն ունեն վճարելու: Նա համապատասխան մարմիններին հանձնարարել է խստագույն միջոցներ ձեռնարկել բոլոր չվճարողների նկատմամբ, անկախ նրանց զբաղեցրած պաշտոնից՝ անջատելով էլեկտրական հոսանքի մատակարարումը: Նախագահը շեշտել է, որ չի հանդուրժելու նման երեւույթները: «Համակարգը պետք է զերծ լինի ցանկացած ոտնձգությունից, եւ որեւէ մեկը իրեն չպետք է զգա արտոնյալ վիճակում», ասել է նա:

Ռոբերտ Քոչարյանը խորհրդակցության մասնակիցներին հանձնարարել է միջոցներ ձեռնարկել հնգօրյա ժամկետում մարելու բոլոր պարտքերը, իսկ էներգետիկայի նախարարին՝ զեկուցել արդյունքների մասին:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ

տեղական

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը բախում է Առեւտրի համաշխարհային կազմակերպության դռները

Ստեր երկրի անդամակցությունը Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) ամիսների հարց է: Այս մասին երեկ մի քանի լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի փոխնախարար Տիգրան Դավթյանը: Նա համոզմունք հայտնեց, որ 28 երկրներից, որոնք ցանկանում են անդամակցել ԱՀԿ-ին, Հայաստանը թերեւս առաջինը դառնա: ԱՊՀ երկրներից կազմակերպության անդամ են ընդամենը երեք երկիր՝ Վրաստանը, Մոլդովան եւ Կիրգիզիան: Իրենց հերթին սպասողների թվում են Ռուսաստանը եւ Չինաստանը: Ի դեմ, վերջինս այդ նպատակին հասնելու համար արդեն 15 տարի բանակցում է: Ինչ վերաբերում է Հայաստանին, մենք անդամակցման գործընթացը սկսել ենք 1995 թ.-ից: Աշխատանքները տարվում են 4 ուղղություններով՝ բազմակողմ բանակցություններ, երկկողմ բանակցություններ, օրենսդրության համապատասխանեցում ԱՀԿ չափանիշներին, անհրաժեշտ փաստաթղթերի եւ հաշվետվությունների տրամադրում ԱՀԿ անդամ երկրներին (որոնց ընդհանուր թիվը 144 է) եւ կազմակերպության խորհրդարությանը:

Երկկողմ բանակցությունները Հայաստանն ավարտել է: Դա ենթադրում է առանձին-առանձին բանակցություններ ԱՀԿ անդամ այն երկրների հետ, որոնք նման ցանկություն ունեն: Իսկ նման ցանկություն հայտնել են 14-15 երկրներ (ԱՄՆ, Ճապոնիա, Ավստրալիա, Հնդկաստան, եվրոպական երկրներ եւ այլն):

Երկրորդ բազմակողմ ֆորմատով բանակցություններն արդեն մոտ են ավարտին: Այստեղ մյուս երկրների անունից Հայաստանի հետ բանակցում է ԱՄՆ-ը:

Երրորդ օրենսդրության համապատասխանեցման ուղղությամբ, ըստ փոխնախարարի, 90 տոկոսով աշխատանքը կատարված է: Ընդունվել են մի շարք կարեւորագույն օրենքներ՝ «Ներքին շուկայի ապահովության մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Լիցենզավորման մասին», Մաքսային օրենսգիրքը եւ այլն: Ներկայումս Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացված «Հակադեմպինգի մասին» օրենքը: Այս բոլոր օրենքներն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրում են ԱՀԿ գիրը բնութագրող 100 էջանոց տեղեկագիրքը, որտեղ տրված են բոլոր հնարավոր մանրամասները երկրի տնտեսական կացության մասին:

Գլխավոր խնդիրներն ԱՀԿ-ի անդամակցության ճանապարհին թերեւս պետության կողմից գյուղատնտեսության սուբսիդացիան եւ գյուղմթերքների արտադրության հարկումն են: Առաջինի համար ԱՀԿ-ն առաջարկում է 40 մլն դոլար: Սակայն, ըստ Տիգրան Դավթյանի, բանակցությունների ընթացքում «եկել ենք ավելի լավ պայմանավորվածության»: Գյուղմթերքների արտադրության, որն ազատված է ավելացված արժեքի հարկից, հարկման վերաբերյալ փոխնախարարը տեղեկացրեց, որ կան տարբերակներ, որոնց դեպքում հնարավոր է բավարարել կազմակերպության պահանջները եւ չվնասել մեր գյուղատնտեսությանը:

«Ինչպե՞ս են վերաբերվում ԱՀԿ-ի անդամակցությանը մեր գործարարները եւ ի վերջո ի՞նչ կտա մեզ այդ անդամակցությունը» հարցի առնչությամբ Տիգրան Դավթյանը պատասխանեց, որ երկու հանդիպումները Հայաստանի գործարարների եւ արդյունաբերողների միությունում իր մոտ այն տպավորությունն են ստեղծել, որ գործարարները դրական են տրամադրված: Իսկ թե ինչ կտա մեզ՝ նախ եւ առաջ արտահանման ավելի բարենպաստ պայմաններ: ԱՀԿ-ի անդամակցությունը մեզ թույլ չի տա վարել «կոմիտիտ հովանավորչական» տնտեսական քաղաքականություն, որն ի վերջո կարող է տվյալ երկրի տնտեսության փլուզման պատճառ դառնալ: Սակայն «փափուկ հովանավորչությունը» հնարավոր կլինի ներմուծվող ապրանքների նկատմամբ մինչեւ 15 տոկոս մաքսատուրքի կիրառման, ներքին արտադրողին ներմուծման պատճառով քայքայվելուց պաշտպանելու համար ժամանակավոր միջոցառումների տեսքով:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Լեհաստանի նախագահի հայտարարությունները Հայոց ցեղասպանության վերաբերյալ չեն սառեցնի լեհ-թուրքական հարաբերությունները»

Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվաշնեւսկու վերջերս Հայաստան կատարած պետական այցի ընթացքում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Թուրքիային ուղղված կոչը կտրուկ արձագանք ստացավ Անկարայում: Թուրքական թերթերը գրեցին, թե «Լեհաստանի նախագահը սվեր է գցում Անկարայի հետ այդ երկրի գրեթե իդեալական հարաբերությունների վրա», եւ խոստացան, որ՝ «ամենակարճ ժամանակում Թուրքիան կպատասխանի այս հանդուգն քայլին»:

Հայաստանում Լեհաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Պյոտր Իվաշկեւիչից փորձեցինք պարզել, թե արդյոք թուրքական սպառնալիքները Լեհաստանին ստացե՞լ են պատասխանական ընթացք:

«Թուրքական իշխանություններն իսկապես պատասխանվում էին նոտա հղել պատասխանական Վարշավային, բայց տեղեկություն չունեմ՝ արդեն ուղարկվե՞լ է, թե՞ ոչ», նշեց հավատարմատարը: Նա վստահեցրեց նաեւ, թե իր երկրի նախագահի սույն հայտարարությունն ու դրա շուրջ բորբոքված գործընթացը չտիտի սառնություն մտցնեն լեհ-թուրքական հարաբերություններում: Մեկնաբանելով Կվաշնեւսկու հայտարարությունը՝ որն Իվաշկեւիչը նշեց, թե, իր կարծիքով, նախագահը նկատի է ունեցել Լեհաստանի օրինակը: «Խոսքն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Լեհաստանի քաղաքացի միլիոնավոր հրեաների, նաեւ վեց միլիոն լեհերի ցեղասպանության մասին է՝ նացիստական Գերմանիայի կողմից: Բայց ավելի ուշ, 1960-ական թվականներին Լեհաստանն ու Գերմանիան կարողացան սկսել հաշտեցման գործընթաց: Մասնավորապես լեհ եպիսկոպոսները գերմանացի իրենց դասակիցներին նամակներ հղեցին. «Ներում ենք եւ ներողություն ենք խնդրում» կարգախոսով, հիշեցրեց լեհ դիվանագետը: Ընդգծելով, որ դժվարին, երկու կողմերում էլ ընդդիմադիրներ ունեցող այս գործընթացը հնարավոր դարձավ միայն Գերմանիայի կողմից նացիստական ռեժիմի հրեաների եւ այլոց ցեղասպանության ճանաչումով, Պ. Իվաշկեւիչն ասաց, թե հենց այս փաստն է նկատի ունեցել Լեհաստանի նախագահը Հայաստանում արած իր հայտարարություններում: Եվ որ առանց երկկողմանի պատասխանվության հաշտեցումն անհնար է:

Գալով Կվաշնեւսկու մեկ այլ հայտարարությանը, թե ինքը չի կարող վստահեցնել, որ Լեհաստանի խորհրդարանը կընդունի Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ, հավատարմատարն էլ նշեց, որ այդ խնդիրը չկա իրենց խորհրդարանի օրակարգում, բայց արագան ցույց կտա:

Լ. Գ.

ԱՍՈՒԼԻՍ

Ռուսաստան-ԱՄՆ մերձեցումն արագացնում է Հայաստանի կոմպլեմենտար քաղաքականության արդյունավետությունը

Սկիզբը էջ 1

Որպես միջազգային նոր իրողության հաջորդ հանգամանք, որ առնչվում է Հայաստանին եւ կարող էր բացասաբար անդրադառնալ վերջինիս վրա, ԱԳ նախարարն առանձնացրեց ԱՄՆ Կոնգրեսի 907 բանաձեւի վերացումը: Նշելով, որ բանաձեւի չեզոքացումը հստակ ձեւակերպումներով է արվում, մասնավորապես Ադրբեջանին ԱՄՆ-ից տրամադրվող որեւէ օգնություն չի կարող խաթարել ԼՂ խնդրի խաղաղ կարգավորման գործընթացը, Վ. Օսկանյանը վստահեցրեց, թե սա արդեն իսկ նշանակում է, որ օգնությունը որեւէ կերպ չի կարող օգտագործվել ԼՂ-ի դեմ: Այնպես որ, չսպառնալով նաեւ Հայաստանին, առհասարակ կովկասաբնակ հայերին, սույն բանաձեւի չեզոքացումը կարող է ընդհակառակը՝ Հայաստանի համար Մ. Նահանգների հետ համագործակցության նոր հնարավորություններ ստեղծել:

Համագործակցությունը ներառելու է մասնավորապես ռազմական ոլորտը: Վերջինիս կոնկրետ ուղղությունները ճշտված չեն, «դեռ սաղմնային փուլում է գործընթացը, բայց, քաջ գիտակցում ենք, որ ունենալու է սահմանափակումներ: Ռուսաստանի հետ, անշուշտ, մեր ռազմական համագործակցությունը բոլորովին այլ որակի եւ աստիճանի է: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ի հետ այս ոլորտում համագործակցությունը կարող է նոր որակ հաղորդել մեր վարած փոխլրացման քաղաքականությանը»:

Դարձյալ վերադառնալով Ադրբեջանին՝ ՀՀ արտգործնախարարը շեշտեց, թե այս երկրին ԱՄՆ ռազմական օգնության ցուցաբերումը նկատի չի առնելու ռազմական տեխնիկայի տրամադրում, այլ սահմանափակվելու է կադրերի պատրաստման, սահմանների ամրացման համար անհրաժեշտ տեխնիկայի տրամադրման խնդիրներով:

Ամփոփելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին այցը՝ Վ. Օսկանյանը նշեց, որ էական տեղաշարժ այս անգամ չի գրանցվել: Նոր առաջարկություններ չեն արվել, միջնորդները փորձել են բանակցությունները վերադարձնել փարիզյան սկզբունքների հուն՝ բայց առանց շոշափելի հաջողության: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը վերահաստատեց Հայաստանի պատրաստակամությունն ընդառաջելու ՄԽ համանախագահների առաջարկին՝ Ադրբեջանի հետ փոխվստահություն ներշնչող քայլերի ձեռնարկման ուղղությամբ: Նախարարը, բերելով Հ. Ալիեւի վերջին հայտարարությունը, թե ԼՂ հարցը կարելի է լուծել մինչեւ հաջորդ տարվա վերջ, հույս հայտնեց, թե նման նոր ոգին կարող է բանակցություններում լուրջ առաջընթաց ապահովել Քոչարյան-Ալիեւ՝ Մոսկվայում ԱՊՀ 10-ամյա գագաթաժողովի շրջանակներում հավանաբար կայանալիք հանդիպմանը:

Վերջերս քանիցս շեշտվում է փաստը, որ ԼՂ-ն երբեք չի եղել ոչ խորհրդային Ադրբեջանի կազմում, եւ մեր հարցին, թե «խնդիրն իրավական այս հարթությունում ներկայացվե՞լ է համանախագահներին եւ ի՞նչ արձագանքի է արժանացել», Վ. Օսկանյանը պատասխանեց, որ խնդիրն այդ հարթությունում մշտապես է դրվել: «Պարզապես վերջին ժամանակներս առավել ենք շեշտում: Համանախագահներն, իհարկե, այս փաստերը լսում, ընկալում են, բայց որեւէ արձագանք նրանց կողմից չկա: Եվ ես դա բնական եմ համարում, քանի որ նրանք միջնորդներ են եւ չեն կարող այս պահին նախապատվությունը տալ այս կամ այն տարբերակին: Նրանց պարտավորությունն է միայն կողմերին մոտ բերել իրար եւ վերացնել տարաձայնությունները»: Բայց մեր կողմից սույն հարցը միշտ բարձրացվում է: Այսպես, վերջին անգամ Ղարաբաղի՝ անկախ Ադրբեջանի կազմում ոչ 1918-20 թթ., ոչ էլ ԽՍՀՄ փլուզումից հետո չլինելու փաստի մասին Վ. Օսկանյանը հայտարարել է Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի 56-րդ նստաշրջանին, այս ամիս:

Լրագրողներին հետաքրքրում էր նաեւ Իրան-Հայաստան գազամուղի կառուցման խնդիրը, հատկապես, թե ի՞նչ եղան տարեսկզբի հայտարարությունները, որ աշնանը գազամուղի կառուցման աշխատանքների առաջին փուլն ավարտված կլինի: «Սա բարդ խնդիր է: Եվ եթե մենք մեկ տարի ենք լավատեսական հայտարարություններ արել, Բաքու-Ջեյհան նավթամուղի վերաբերյալ նման հայտարարություններ արվում են արդեն տասը տարի»: Այսպանով հանդերձ, որն Օսկանյանի գնահատմամբ, գազատարի կառուցման առնչությամբ մեծ առաջընթաց է գրանցվել, պատրաստ են բոլոր փաստաթղթերը, «եթե դեռեւս առկա մեկ-երկու տարաձայնություններն էլ վերացնենք, չեմ բացառում, որ ՀՀ նախագահի՝ Իրան կատարելիք առաջիկա այցին սոճառգրվի վերջնական փաստաթուղթ, ու հաջորդ տարի կառուցման աշխատանքներն սկսվեն»:

Այսօր ՀՀ արտգործնախարարը մեկնում է Մոսկվա՝ մասնակցելու ԱՊՀ տասնամյա գագաթաժողովի ԱԳ նախարարների նիստին: Այստեղ, ըստ Վ. Օսկանյանի, գլխավոր թեման կլինի Աֆղանստանի հետպատերազմական իրավիճակը, մասնավորապես կառավարություն կազմելուն առնչվող խնդիրներ, ինչպես նաեւ Կենտրոնական Ասիայի երկրների անվտանգությանը վերաբերող հարցեր:

«Պատրաստվում ենք այս ամենն ամփոփող համատեղ հայտարարություն ընդունել, որն այնուհետեւ՝ նոյեմբերի 30-ին կներկայացվի ԱՊՀ անդամ երկրների նախագահներին»:

«Հաշտարարները» պետք է վերանայեն իրենց գործունեությունը

Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավար Վարդան Օսկանյանը երեկ մամլո ասուլիսում կրկնեց մի քանի օր առաջ Լոս Անջելեսում արած հայտարարությունը, թե ժամանակն է, որ «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» հայաստանցի մասնակիցները գնահատական տան վեցամսյա իրենց գործունեությանը, «տեսնեն ինչ դրական եւ բացասական գործոններ, ինչպիսի արդյունքներ կան; եթե կան, փորձեն այս բոլորը միջինի վրա դնել եւ որոշել հաջորդ քայլերը»: «Եթե չլիներ իմ կոչը, հանձնաժողովի հայաստանցի մասնակիցները, այնուամենայնիվ, գնահատական կտային իրենց գործունեությանը, կարծում եմ կանեն: Դա պետք է անել յուրաքանչյուր հանդիպումից հետո», ասաց որն Օսկանյանը:

Ռ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային ծառայութիւն
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Սփյուռքի եւ Հայաստանի ռամկավարները փառատուփ նշեցին իրենց հոբելյանը

Սկիզբը էջ 1

ՌԱԿ ու ՀՌԱԿ ներկայացուցիչների համատեղ հավաքը Թեհեյան կենտրոնում

Ճիշտ 80 տարի առաջ մեր հնագույն ազգային կուսակցություններից մեկը սկսեց կոչվել Ռամկավար Ազատական, եւ ճիշտ 10 տարի առաջ այդ ազգային կուսակցությունն իր հանգրվանը գտավ նաեւ Հայաստանում: Այս վերջին փաստն ավելի քան խորհրդանշական է, որովհետեւ աշխարհի տասնյակ երկրներում իր կառույցներն ունեցող, սփյուռքի հասկացությունից անբաժանելի Ռամկավար Ազատական կուսակցությունն ի վերջո չէր համարվի լիարժեքորեն ինքնահաստատված, եթե չինքնահաստատվեր, չձեւավորվեր ու չկայանար նախ եւ առաջ հայրենիքում: Այսպիսով, սփյուռքում տասնամյակներ շարունակ հայրենիքի մասին երազող եւ իրենց համար դեռեւս հեռավոր ու անհասանելի Հայաստանին հնարավորինս օգնող

ՌԱԿ-ն անկախ հանրապետության ստեղծումով ինքնաբերաբար հնարավորություն ստացավ հայրենիք եւս մուտք գործելու, այստեղ եւս ծավալելու իր գործունեությունն ու գաղափարախոսությունը: Թեպետ անցած տասնամյակը թե՛ ՌԱԿ-ի եւ թե՛ ՀՌԱԿ-ի համար հավասարապես լի էր հաջողություններով ու անհաջողություններով, վերելքներով ու անկումներով, այդուհանդերձ այս ազգային կուսակցությանն ու իր ներկայացուցիչներին հաջողվեց հաղթահարել ինքնահաստատման ճանապարհին ծառացած արգելքները՝ ներքին ու արտաքին պառակտումներից մինչեւ լիակատար հաշտություն եւ փոխըմբռնում, հետապնդումներից ու մեկուսացածությունից մինչեւ ուժերի վերագնահատում եւ զարթոնք...

Այսօր ՌԱԿ-ն ու ՀՌԱԿ-ը վերստին միասին են թե՛ գաղափարական, թե՛ գործունեության ու, անշուշտ, նաեւ այս կրկնակի հոբելյանը հայրենիքում համատեղ տոնելու առումներով: Նոյեմբերի 27-ն առավոտից մինչեւ երեկո հագեցած էր կուսակցության կազմակերպած միջոցառումներով, որոնցից մեկն էլ Թեհեյան կենտրոնում ընթացող համակուսակցական հավաքն էր՝ ՌԱԿ կենտրոնական եւ ՀՌԱԿ Հանրապետական վարչությունների, սփյուռքի շրջանային եւ Հայաստանի մարզային կառույցների ներկայացուցիչների ու այլոց մասնակցությամբ: Ի դեմ, հավաքը նշանավորվեց եւս մի դրվագով՝ ավելի քան հետաքրքրական նախապատմություն ունեցող երդմնառության արարողությամբ...

Թեպետ հավաքն ավելի շատ զգացմունքային, քան վերլուծական բնույթ ու տրամադրություն ուներ, սակայն նման ընթացքն այս պարագայում օրինաչափ ու կանխատեսելի էր. չէ՞ որ ՌԱԿ ու ՀՌԱԿ ներկայացուցիչներից յուրաքանչյուրի համար այդօրինակ միջոցառումը երկար սպասված մի ծրագիր-նպատակի իրագործումն էր: Այնպես որ, ելույթների հուզականությունն էլ տեղին էր ու ինքնին արդարացված...

Առաջին ելույթի «իրավունքը» հյուրընկալող կողմինն էր: ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը սփյուռքահայ համախոհներին ներկայացրեց կուսակցության՝ հանրապետությունում վերջին շրջանում ծավալած եռանդուն գործունեության առավել կարեւոր արդյունքներն ու մանրամասները: Բնականաբար, ՀՌԱԿ-ն ուժերի ողջ լարումով նախապատրաստվում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ 2002-ին կայանալիք ընտրություններին, ինչպես նաեւ խորհրդարանական ընտրություններին: Ինչ վերաբերում է նախագահական ընտրություններին, ապա ՀՌԱԿ-ն այս կապակցությամբ արդեն հրապարակորեն հայտնել է իր դիրքորոշումը: Նախորդ հավաքից մինչեւ այս մեկն ընկած ժամանակահատվածում մի քանի տասնյակ ակումբներ են հիմնվել հանրապետության տարբեր մարզերում, կուսակցության շարքերն էլ համալրվել են նորագիրների սվար զանգվածով: Այդուհանդերձ, կուսակցության շարքեր ընդունելությունը զանգվածային բնույթ չի կրում եւ հետայսու էլ չի կրի, քանի որ ՀՌԱԿ-ի համար առաջնայինը որակն է, ո՛չ թե քանակը, իսկ անդամակցել ցանկացողների խիստ ընտրությունը պայմանավորված է նաեւ կուսակցության գաղափարախոսության բնույթով: Ավելի ուշ այս վերջին հարցին անդրադարձավ նաեւ ՌԱԿ Կենտրոնական վարչության փոխատենապետ, Մ. Նահանգների ՌԱԿ մասնաճյուղի ներկայացուցիչ Երվանդ Ազատյանը:

Իսկ մինչ այդ ելույթի իրավունքը փոխանցվեց ՌԱԿ ԿՎ ատենապետ Հակոբ Գասպարյանին: Վերջինս հետադարձ հայացք նետեց ՌԱԿ-ի՝ սփյուռքում վերջին տարիներին անցկացրած դժվարին պահերին, որպես իրենց բարեհաջող լուծումը գտան Աբխազիայում կայացած համակուսակցական ժողովում: Այդ ժամանակ էր, որ ներկուսակցական խոսվությունները հարթվեցին: Ներկայումս սփյուռքահայ ռամկավարական շրջանակներում, նրա խոսքերով, ոչ պակաս աշխուժություն է տիրում, քան Հայաստանում: Ուրախալի մի փաստ է արձանագրվել Լիբանանում, ուր վերջերս տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում պատգամավոր է ընտրվել ՌԱԿ ներկայացուցիչը: Կուսակցության անդամները մեծ հաջողությամբ են գործում Ֆրանսիայում. նրանցից շատերն այդ երկրում բարձր պաշտոններ ու պատասխանատու դիրք են գրավում: Այս ու բազմաթիվ այլ հուսադրող փաստեր արձանագրելով՝ Հակոբ Գասպարյանն իր ելույթի ավարտին մի հուշանվեր հանձնեց ԿՎ անունից՝ կուսակցության շքեղատես գինանշանը:

Ներկաները հրաժարակորեն շնորհավորեցին ելույթի նախապատրաստվող Երվանդ Ազատյանին, որին ՀՀ նախագահը վերջերս պարգեւատրել է «Մովսես Խորենացի» հուշամեդալով: «Ինչը որ չհաստատվեց անել անցած 80 տարիների ընթացքում, պիտի հաստատենք առաջիկա 8 տասնամյակների ընթացքում», կեսլուրջ-կեսկատակ արձանագրեց Ե. Ազատյանը: Ապա խոսեց ցավոտ մի հարցի մասին. Հայաստանում կուսակցություններն անընդմեջ ծնվում են, պառակտվում ու մեռնում, իսկ սփյուռքը մտահոգ հետեւում է այդ գործընթացներին: «Նույնիսկ դրանց անունները չենք հասցնում մտապահել՝ մեկ էլ հանկարծ պարզվում է, որ արդեն չկան», նշեց նա՝ միաժամանակ զուգահեռ անցկացնելով մշտապես կայուն դիրքերում գտնվող ՀՌԱԿ-ի հետ: Այս կուսակցությունը, նրա խոսքերով, մնայուն է նաեւ այն պատճառով, որ «ո՛չ թե զանգվածների, այլ մտավորականության եւ գործարարների կուսակցություն է»: Յուրաքանչյուրն ունի իր տեղն ու դերն այս աշխարհում, եւ եթե մեր դերը ճիշտ իմանանք, կունենանք ուժեղ ու առողջ հասարակություն. այսպիսին էր նրա փիլիսոփայական ընդհանրացումը:

Հավաքի ընթացքում ելույթ ունեցան ո՛չ միայն սփյուռքահայ հյուրերը, այլեւ մարզային կառույցների, երեւանյան ակումբների ներկայացուցիչները: Կուսակցության գործունեության գնահատականներով հանդես եկան Արարատի շրջանային վարչության ատենապետ Սամվել Մինասյանը, «Այգեստան» ակումբի ատենապետ Արմեն Ստեփանյանը, «Սյունիք» ակումբի ատենապետ Էդիկ Ստեփանյանը, Արավիր Եղիշյանը՝ «Մեծամոր» ակումբից եւ Արմեն Մարգարյանը՝ «Մալիշկա» ակումբից, Պետրոս Գեւորգյանը՝ «Մալաթիայից» եւ 30 տարվա կուսակցական կենսագրություն ունեցող Վարդգես Քեշիշյանը՝ ներկայումս «Վանաձոր» ակումբի անունից հանդես եկող:

Սակայն վերադառնանք սփյուռքի ՌԱԿ ներկայացուցիչներին, որոնց ելույթները հետզհետե ավելի ու ավելի հուզական էին դառնում: Ֆրանսիայի եւ Եվրոպայի շրջանային վարչության ատենապետ Վարուժան Միրաքյանը նշեց, թե որչափ գործուն մասնակցություն են ունեցել կուսակցության ներկայացուցիչները հանրահայտ «Ապրիլի 24» կոմիտեի աշխատանքներին, կոմիտեն նաեւ ղեկավարվել է հենց ՌԱԿ անդամի կողմից: «Վարչակարգերն ու մարդիկ կանցնեն-կգնան՝ Հայաստանը կմնա. պիտի մեր հայրենիքի համար աշխատինք», եզրահանգեց նա: Ապա Թեհեյան կենտրոնին իր հուշանվերները հանձնեց ու ելույթ ունեցավ եգիպտոսի ՌԱԿ շրջանային վարչության ատենապետ Նորայր Դովլաթյանը: Ամենակրքոտը, թերեւս, Լիբանանի ՌԱԿ շրջանային վարչության ատենապետ Հայր Հովիվյանի ելույթն էր, որից պարզապես հորդում էր հայրենասիրությունը: Թեպետ լիբանանահայ գաղութը մեծ չէ, սակայն Ռամկավար Ազատական կուսակցությունն այստեղ իր կայուն ու հեղինակավոր տեղն ունի: Հունաստանի ՌԱԿ շրջանակը ներկայացրեց Զավեն Գրիգորյանը, որը նաեւ կուսակցական «Նոր աշխարհ» թերթի խմբագիրն է (թերթն, ի դեմ, 48 տարվա պատմություն ունի): Սիրիայի եւ Հորդանանի ՌԱԿ շրջանային վարչության անունից հանդես եկավ Ժան Գաբոյանը, որն առաջնային ուշադրություն դարձրեց արտագաղթ կոչվող վտանգավոր երեւույթին: Ելույթների շարքը շարունակեց եւս մեկ ներկայացուցիչ Հունաստանի ՌԱԿ շրջանակից՝ Սարգիս Խաչատրյանը, ինչպես նաեւ՝ ԿՎ անդամ Կարպիս Յազըճյանը: ՀՌԱԿ ՀՎ անունից ելույթ ունեցավ Ռոբերտ Մավիսակալյանը:

Այնուհետեւ տեղի ունեցավ ամերիկաբնակ 2 երիտասարդների երդմնառության արարողությունը: Վերջինն ընթացավ անգլերենով՝ լեփլեցուն դահլիճի անմիջական մասնակցությամբ, որովհետեւ Դետրոյթից բժիշկ Դեյվիդն ու գործարար էդուարդը՝ նրա եղբայրը, հայերեն չգիտեին: Սակայն նրանք արդեն 4-րդ սերունդն են ներկայացնում մի ընտանիքի, որն ավանդաբար հանդիսանում է այս կուսակցության անդամ, ժառանգության պես փոխանցում այդ պարտականությունն ու կողմնորոշումը: Երիտասարդների հետ երեւան էր ժամանել նաեւ նրանց պապը՝ 94-ամյա կուսակցական Սուրեն Աբրահամյանը, որի կուսակցական պատկանելության 80-ամյակը լրացավ ՌԱԿ 80-ամյակի հետ միաժամանակ: Նրա բաղձանքն իրականացավ Հայաստանում, անպայման Հայաստանում ներկա գտնվել իր թոռների երդմնառության արարողությանը...

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Դառնալ ոսկի կամուրջ անցյալի եւ ապագայի միջեւ

Հոբելյանական տոնակատարության ավարտական ակորդը Հայաստանի ազգային օպերային թատրոնում կազմակերպված միջոցառումն էր, որին իրենց մասնակցությունն էին բերել Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, պատգամավորական այլ անձինք:

Բանախոսությամբ հանդես եկավ Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչության ատենապետ, Լիբանանի խորհրդարանի անդամ Հակոբ Գասպարյանը, որը ՌԱԿ-ի 80-ամյակի եւ ՀՌԱԿ-ի հիմնադրման տասնամյակի տոնակատարությունները գնահատեց որպես պատմական օր:

«Ծայրայեղությունը, մոլեռանդությունը եւ մենաշնորհական ձգտումները, մասնավորապես ասաց բանախոսը, տխուր աւերներ գործած են մեր ժողովուրդի գլխուն ու այդ աղետներու փորձն օգտագործելով մեր կուսակցությունը հանդիսացած է չափաւորության, հաւասարակշռության եւ միասնականության հետամուտ քաղաքական կազմակերպություն մը, եւ այդ գաղափարները ոչ միայն արձանագրած է իր հաւատոյ հանգանակին մէջ՝ այլ գործնականապես իրականացուցած է իր գործունեության դաշտն ներս»: Իբրեւ Լիբանանի քաղաքացի այս երկրում ապրող հայ ռամկավարները պարտավորություններ ունեն հյուրընկալ երկրի նկատմամբ, սակայն նաեւ պարտավորություններ հայրենիքի՝ Հայաստանի հանդեպ: «Այդ առումով մեր առաքելությունը դիւրացուցին նախագահներ պրն Քոչարեանը եւ զօրավար Լահուդը, որոնք ամուր հիմերը դրին զոյգ երկիրներու միջեւ սերտ յարաբերության», իր խոսքը եզրափակեց ՌԱԿ ատենապետը՝ հայրենիքի գաղափարակիցներին Հայաստանի խորհրդարանում դեմոկրատիայի եւ խոհուն հայրենասիրության ձայնը հնչեցնելու մաղթանք հղելով:

ՀՌԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը նշեց, որ կուսակցությունը վերջին ժամանակներս դարձել է Հայաստանի Հանրապետության քաղաքական ազդեցիկ ուժերից մեկը: «Եվ դա շնորհիվ այն բանի, ասաց ատենապետը, որ հայկական ավանդական կուսակցություններից ամենաերկար պատմություն ունեցող Արմենական կուսակցության նվիրյալ հետեւորդն է: Մեր կուսակցության այսօրվա խնդիրը հայրենիքի բարգավաճմանը, հայրենիքի ամրապնդմանն ուղղված քայլերն են, հայրենի իշխանություններին սատար լինելը: Կուսակցությունը բարեկամական, ջերմ հարաբերությունների մեջ է նաեւ հայ հոգեւոր կենտրոնի՝ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հետ, այն համարելով որպես հայ ժողովրդի միասնական հոգեւոր, գլխավոր եւ միակ կենտրոն»:

Հանդիսության ավարտին բազմաթիվ մասնակիցներ ողջույնի իրենց խոսքն էին ասում: ՌԱԿ Կենտրոնական վարչության փոխատենապետ Երվանդ Ազատյանը շատ մեծ տպավորություններ ունի հոբելյանական տոնակատարությունների կազմակերպիչների տաղանդավոր աշխատանքից:

«Կուսակցությանը վայել, 80-ամեակին եւ 10-ամեակին վայել ձեռնարկ մըն էր,– ասաց Երվանդ Ազատյանը: Բարեբախտաբար ունեցանք Հայաստանի նախագահին եւ հայ հոգեւոր գերագույն պետին ներկայութիւնն ալ վայելելու, որ կնշանակէ, թէ կուսակցութիւնը համընդհանուր շահերու ծառայող կազմակերպութիւն մըն է»:

Խոսելով այն մասին, որ ռամկավար-ազատական գաղափարախոսությունը մայր հայրենիքում հաղթանակում է, ՌԱԿ ատենապետը նշեց. «Տեղական կազմակերպությանն աշխատանքն իսկապես տպավորիչ է, մանաւանդ որ այսօր նոր պայմաններ ստեղծուած են ազգային կուսակցութիւններու գործունեութեան համար: Այլեւս հալածանքներ չկան, եւ բոլորի գաղափարները արտայայտելու եւ դրանք գործի վերածելու հնարաւորութիւնները ստեղծուած են: Մեր ընկերները այդ առիթից օգտուելով կազմակերպչական իրենց լաւագոյն ուժերը լարած են, որպէսզի հաւաքագրեն նոր անդամներ եւ մեր գաղափարաբանութեան դրօշին ներքեւ կարողանան իրենց խոսքն ըսել վաղը մեր պետութեան օրակներուն մէջ»:

ՌԱԿ եգիպտոսի կազմակերպության ատենապետ Նորայր Դովլաթյանը հիացած էր տոնակատարությունների կազմակերպումով. «Հրա՞շք է, հոյակա՞պ է, հաստատես երգչախումբը, երիտասարդները հոյակապ են: Սա իմ իններորդ այցելությունն է մայր հայրենիք: Ես մէկ բան պիտի առաջարկեմ. մեր խօսքը եւ գործը պէտք է զուգահեռ ընթանան: Մենք խօսքի պէտք այլեւս չունինք, պէտք է գործենք, պէտք է աշխատինք: Եւ մեր աշխատանքը պէտք է ոսկի կամուրջը դառնայ մեր անցեալի ու ապագայի միջեւ: Որպեսզի կուսակցական ընկերներու բանակ է հոս ստեղծուած: Բայց պէտք է աւելացնել այդ հաւատաւոր կուսակցական ընկերներու թիւը, որպէսզի կարողանանք հասնիլ մեր հայրենիքի բարգաւաճման, մեր ժողովուրդի բարօրութեան»:

Հանդիսության մասնակիցների համար կազմակերպվել էր ճոխ, անմոռանալի համերգ, որին իրենց մասնակցությունը բերեցին մեր երկրի լավագույն կատարողները, երգչախմբերը եւ նվագախմբերը:

Երեկոյին մեծ շուք տվեցին Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի (գեղարվեստական ղեկավար, ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյան), հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի եւ երգչախմբի (դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան), ժողովրդական արտիստ Տիվան Գասպարյանի, հասմիկ հացագործյանի, ժողովրդական արտիստ Ռոբերտ Ամիրխանյանի, Արա Գեւորգյանի, ասմունքող Սարգիս Նաջարյանի եւ այլոց կատարումները: Հանդիսության տոնական համերգի կազմակերպիչ, բեմադրող ռեժիսոր Տիգրան Հեքեքյանը կարողացել էր ստեղծել բարձրաճաշակ մի ներկայացում, որը գեղագիտական մեծ հաճույք պատճառեց հանդիսատեսին:

ՄԵՐԳԵՆ ԳԱԼՈՅԱՆ

Վերլուծություն

Նահանջ Կովկասում

Մամուլի ազգային ակումբի նախագահի այս հոդվածը փորձ է վերլուծելու Հայաստանում եւ ընդհանրապես Անդրկովկասում ամերիկյան քաղաքականության անցնող տասնամյակը, որպես ժամանակափուլ ընդունելով սեպտեմբերի 11-ը: Դժբախտաբար, վերլուծության մեջ չի ներփակվում հարցի տնտեսական կողմը, որի քննությունը, վստահ եմք, թույլ չէր տա հեղինակին գերագնահատելու ամերիկյան դերը մեր տարածաշրջանում եւ հատկապես Հայաստանի զարգացման տեսակետից, ոչ էլ առիթ կստեղծեր ընդհանրացնելու, թե Վաշինգտոնի համար ժողովրդավարական արժեքներն ավելի կարեւոր են, քան իր ազգային շահերը:

Մեր դարաշրջանի ամենաբարդ, ամենաանկանխատեսելի, ամենաանսպասելի իրադարձությունները երկու ամսվա ընթացքում այնպես են փոխել աշխարհի դեմքը, որ այդմ միջազգային հարաբերությունների ողջ դինամիկան, ջարդել գոյություն ունեցող կաղապարները, վեր հանել նոր աշխարհակարգի ստեղծման ցանկությունները ու նպատակները, որ թվում է, թե աշխարհաքաղաքական փոփոխությունների սրընթաց զարգացումն այլեւս անխոչընդոտ է իրականացվում եւ անհնար է կասեցնել:

Սառը պատերազմն ավարտվեց սեպտեմբերի 11-ից հետո՝ հիմնականում այսպես է բնութագրվում հետսեպտեմբերյան իրավիճակը միջազգային մամուլում: Միաժամանակ, գերտերությունների ղեկավարները այլեւս չեն թաքցնում, որ նոր աշխարհակարգի ձեւավորման մոդելը պիտի համապատասխանի բացառապես իրենց մոտեցումներին, ցանկություններին ու պահանջներին: Ազդեցությունների վերաբաշխման եւ ճշգրտման համար մղվող պայքարը նրանց միջեւ այսօր ընթանում է դիվանագիտորեն հղկված եւ հնարավորինս համաձայնեցված մթնոլորտում: Դեռ երեկ անլուծելի թվացող հակասությունները հարթվում են, եւ աշխարհի մյուս մասի համար ուրվագծվում են այն մոդելները, որոնք առաջիկայում ներկայացվելու են որպես գերտերությունների կամքի դրսեւորում եւ պարտադրվելու են աշխարհին: Քաղաքական փոշոտված բառարաններից վեր են հանվում հին ձեւակերպումները՝ ով մեզ հետ չէ, մեր դեմ է:

Միաժամանակ, փաստերի եւ իրողությունների դասդասման, ինչպես նաեւ ոչ հեռու անցյալում իրականացված քաղաքականությունը վերլուծելիս պարզ է դառնում, որ գերտերությունների անհողդողդ թվացող կամքը կարող է ճկվել ու տեղի տալ ոչ միայն պատմականորեն կայացած պետությունների, այլեւ «երրորդ աշխարհի» առջեւ: Խնդիրներն ու իրավիճակը բարդանում են ոչ թե այդ երկրների՝ հակազդելու հավասար հնարավորությունների պատճառով, այլ այս կամ այն գերտերության քաղաքականության բացթողումների եւ սխալների արդյունքում:

Այսօրինակ իրավիճակում գերտերություններից Մ. Նահանգների կովկասյան քաղաքականությունը վերլուծելիս ակնհայտ է դառնում այն ահռելի նահանջը, որը ոչ միայն պատմական անցյալում, այլեւ հետխորհրդային այս ողջ ժամանակահատվածում կովկասյան երկրներում արձանագրել է պաշտոնական Վաշինգտոնը:

1. Իր գեոպոլիտիկ դիրքի շնորհիվ Կովկասը մշտապես համարվել է քաղաքակրթությունների եւ պետությունների խաչմերուկ, ուստի նրա համար մղվող պայքարը դաժան է եղել: Միաժամանակ պատմական արյունալի իրողությունների արդյունքում Կովկասը ընկալվել եւ եղել է ռուսական տարանուն կայսրության ազդեցության գոտի: Չնայած կովկասյան տարածաշրջանում ժամանակ առ ժամանակ խլրտացող եւ ուժգնացող պատերազմներին՝ թե՛ հյուսիսային, թե՛ հարավային Կովկասը իր գեոպոլիտիկ դիրքով ռուսական հսկայի համար եղել է այն հենարանը, որտեղ ամրանալը նշանակում էր սերնդեսերունդ փոխանցել ռուսական կայսրության անսասանության առասպելն ու իրողությունը միաժամանակ:

Ըստ այդմ՝ անսպասելի չէր այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի փլուզումից եւ պետական անկախ միավորների ստեղծումից հետո կովկասյան երկրներում տարբեր ուժգնությամբ հնչեցին հակառուսական տրամադրությունների շեփորները: ԽՍՀՄ-ի փլուզումը արմատապես փոխեց նաեւ Կովկասի գեոպոլիտիկ իրավիճակը:

Աշխարհն արագորեն փոխվում էր, եւ մակընթացությունների օվկիանոսում հայտնված նավերի նոր նավապետները հորիզոնում նոր ափեր էին որոնում: Անկախացած պետությունները փորձում էին աշխարհաքաղաքական փոքրիկների հորձանուտում անվտանգ դարձնել երկրի նավարկությունը: Եվ եթե շատերը գտան սեփական կայմը, ապա Հայաստանը, որոշ դեգերումներից հետո, պարանը նետեց ռուսական նավախելին: Դա բնավ էլ անսպասելի չէր թվում, մանավանդ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ պատմական իրողությունների, քաղաքական խնդիրների հանդեպ սթափ եւ սառնասիրտ մոտեցում հայ քաղաքական միտքը, ի բացառյալ 1988-93թթ., հիմնականում չի ցուցաբերել:

Աշխարհը սակայն փոխվում էր, եւ Նոր երկրի նախագահները կովկասյան տարածաշրջան էին փորձում ուղղել ամերիկյան նավերը: Ժամանակն անխափան աշխատում էր ԱՄՆ-ի օգտին, մանավանդ որ Ռուսաստանը իր ահռելի հիմնախնդիրների համար էր լուծումներ որոնում, այնտեղ եւս քարդվում էին պատմականորեն ձեւավորված կաղապարները:

2. Խորհրդային կայսրության անկման արդյունքում Կովկասում պայթեցին 70 տարի սեղմված ազգային հիմնախնդիրներն ու պատմական անարդարությունները լուծելու ձգտումներն ու պահանջները: Չկար այլեւս նախկին կենտրոնը, որը պատրաստ էր բնում խեղդել ազգային խնդրի յուրաքանչյուր դրսեւորում: Յոթ տասնամյակների արդյունքում արմատավորված ազգամիջյան հակասությունները, ինչպես նաեւ նորանկախ պետությունների ներսում քաղաքացիական անհնազանդության ռազմական դրսեւորումները Կովկասը վերածեցին ռազմական հսկա թատերաբեմի, ուր խաղում էին արյունալի տեսարաններ: 90-ական թթ. Կովկասյան տարածաշրջանում մղվող պատերազմները փոխեցին անգամ գերտերություններին, եւ եթե Ռուսաստանը դեռ ավանդույթի ուժով փորձում էր պահպանել ազդեցության գոնե մի քանի գոտիներ, ըստ այդմ՝ ներքաշվելով պատերազմի մեջ, ապա Արեւմուտքը հաղթողում էր հաստատվել Կովկասում: Ըստ այդմ օրինաչափ էր ԱՄՆ նախկին պետքարտուղարներից Հ. Քիսինջերի հետեւյալ դիտարկումը. «Խորհրդային կոմունիզմի փլուզումը ամերիկյան գաղափարների եւ արժեքների ողջամիտ հաղթանակն էր, բայց ճակատագրի ծաղրով այդ փլուզումը ԱՄՆ-ին դեմ առ դեմ կանգնեցրեց այնպիսի աշխարհի առջեւ, որից իր ողջ պատմության ընթացքում Ամերիկան խուսափել է»:

Ռազմական գործողությունների դադարեցումից հետո եւս պատերազմող երկրները դժվարությամբ էին ապաքինում վերքերը. Ադրբեջանը դարաբաղյան պատերազմից դուրս էր եկել պարտված, բարոյապես հաշմված: Պատերազմը, շրջափակումները, էներգետիկ ճգնաժամը հյուծել էին նաեւ Հայաստանին: Վրաստանը դեռ շարունակում էր փոթորկվել վրաց-աբխազական բախումների կաթսայում: Այսօրինակ տագնապալի իրավիճակին ավելանում էր չեչենական պատերազմը, նախապատերազմական տրամադրություններ էին բորբոքվում կովկասյան այլ կետերում: Բացի այդ՝ Տագնապահարույց ու սպառնալի էր շարունակում մնալ ներքաղաքական իրավիճակը կովկասյան պետություններում: Դարաբաղյան հիմնախնդիրը թեւակոխում էր կարգավորման դիվանագիտական հարթություն, Հայաստանում քաղաքական ընդդիմությունը իշխանություններին մեղադրում էր ռազմական հաղթանակները դիվանագիտորեն ամրագնդելու անկարողության մեջ, Ադրբեջանում անվերջ իշխանափոխությունների արդյունքում ծայր էր առել քաղաքական հեռանդումների շղթան, քաղաքացիական անհնազանդության դրսեւորումները Վրաստանում շարունակուում էին կրել ռազմական բնույթ:

Հաստատված փխրուն խաղաղության պայմաններում ԱՄՆ-ը փորձեց վերստին մուտք գործել Կովկաս: Վաշինգտոնի համար Կովկասը դեռ չէր ընկալվում որպես մեկ միասնական եւ ընդհանուր համակարգ, ուստիեւ Մ. Նահանգները զգուշորեն եւ անշտապ գործընկերներ էր փնտրում նախաթուառաջ Անդրկովկասում, որը հմտորեն եւ աննկատ վերանվանեցին Հարավային Կովկաս: Նախնական «ընտրությունը» կատարելով 90-ական թթ. սկզբներին՝ հարավկովկասյան պետություններից ԱՄՆ-ը փորձում էր Հայաստան մտնել՝ չառաջացնելով որեւէ խուճապ, մանավանդ որ այստեղ իշխանության էին եկել ազատականամետ ուժերը, որոնց արդեն իսկ հաջողվել էր կատարել կարեւոր առաջին քայլը՝ հողի սեփականաշնորհումը: Արեւմտյան արժեքները պետության եւ հասարակության զարգացման հիմքում դնելու մասին երեւանի հավաստիացումները թերահավատություն չէին առաջացնում միջազգային հանրության մոտ, որի համար Հայաստանը տարածաշրջանի «ժողովրդավարության կղզյակն» էր, եւ առանձնանում էր ներքաղաքական իրավիճակի կայունությամբ. ի տարբերություն կովկասյան մյուս պետությունների՝ ընդդիմության պայքարը այստեղ երբեւէ չվերածվեց զինված ընդհարումների, եւ երկիրը զերծ մնաց քաղաքացիական կռիվներից:

Բացի այդ՝ Մ. Նահանգներում 1 միլիոնից ավելի հայկական սփյուռքի առկայությունը արդեն իսկ կամուրջ էր ստեղծել երկու երկրների միջեւ: Այսօրինակ իրավիճակում 1991 թ. դեկտեմբերի 27-ին, ճանաչելով Հայաստանի անկախությունը, ԱՄՆ-ը 1992 թ. մեր երկրում առաջինը բացեց դիվանագիտական ներկայացուցչություն:

Կովկասում իր ներկայությունն ապահովելու եւ այնտեղ ասիճանաբար ամրանալու հեռանկարին հետամուտ՝ Վաշինգտոնը որոշեց հաստատվել Հայաստանում: Ամենաերկար ճանապարհն էլ սկսվում էր 1-ին քայլից, եւ Հայաստանը այդ ճանապարհին ԱՄՆ-ի 1-ին քայլն էր: Կովկասն այլեւս անմատչելի ու անառիկ չէր, ինչպես անցյալում էր:

3. Հարավկովկասյան պետություններից հետխորհրդային Հայաստանն առաջինն էր, ուր ստեղծվել էին ժողովրդավարական ինստիտուտների հիմքերը՝ բազմակուսակցականությունն արդեն իսկ իրողություն էր, ձեւավորվել էր ընդդիմադիր մամուլը, 1991 թ. անկախության հանրաքվեն եւ ՀՀ նախագահի 1-ին ընտրությունները անցել էին հասարակական խանդավառության եւ օրինապաշտության մթնոլորտում, ձեւավորվել եւ գործում էր խորհրդարանը:

Այս հանգամանքներն էլ դարձան այն տարբերությունների հիմքը, որը դրված էր մի կողմից՝ Հայաստանի, մյուս կողմից՝ Ադրբեջանի ու Վրաստանի միջեւ: Սակայն 1994-ից հետո երեւանը սկսեց նահանջել որդեգրած արժեքներից, Հայաստանը ասիճանաբար զիջեց իր դիրքերը, եւ հարավկովկասյան երեք պետություններին միացնող ավելի շատ հանգամանքներ ու որակներ ավելացան, որոնց արդյունքում կտրուկ նվազեցին տարբերությունները: 1995 թ. ծայր առած ընտրական գործընթացների ապականումը, բռնարարքները, ընտրապայքարը քաղաքական հարթությունից քրեական դաշտ տեղափոխելու մեխանիզմները, ընտրությունների միջոցով իշխանություններ ձեւավորելու անհնարինությունը վերջնականապես ջնջեցին տարբերությունները երեք պետությունների միջեւ: Մնացած երեւույթների ընդհանրությունները՝ դատաիրավական ոլորտում արատավոր ավանդույթների կենսունակությունը, ողջ պետական համակարգում կաշառակերության, կոռուպցիայի բարձր ասիճանը, սվերային տնտեսաձեւը ձեւավորվել եւ արմատավորվել էին դեռեւս խորհրդային համակարգի ժամանակ:

Այսօրինակ իրավիճակը լրջորեն մտահոգում էր ԱՄՆ-ին: Միաժամանակ, արագ հաղթահարելով անհանգստությունն ու շփոթմունքը՝ Վաշինգտոնը երկու ճանապարհ տեսավ՝ կամ հեռանալ Կովկասից, կամ մնալ եւ հաստատվել՝ ընդունելով հանգամանքներն ու իրողությունները այնպես, ինչպես կան: Վաշինգտոնն ընտրեց վերջին ճանապարհը, որի գոյությունը հետեւանք էր այն մտայնությանն, ըստ որի ժողովրդավարական ինստիտուտների կայացումը կովկասյան հոգեբանության եւ մտածողության պայմաններում անհնար է:

Այդ ընտրությամբ էլ կատարելով կովկասյան քաղաքականության իր առաջին լուրջ սխալը՝ Վաշինգտոնն անտեսեց մեկ այլ՝ երրորդ ուղու գոյությունը, այն է՝ Կովկասից չհեռանալով՝ չնահանջել ազատական տնտեսակարգը, ժողովրդավարական ինստիտուտները կայացնելուց: Վաշինգտոնը «մոռացավ», որ իր երկիրը աշխարհում առաջնային դիրքեր է գրավում ոչ թե պատերազմական գործողությունների արդյունքում, այլ ժողովրդավարական, ազատական արժեքներին հավատարիմ մնալու եւ դրանց տարածման շնորհիվ:

Այնուհետեւ սխալները հաջորդեցին միմյանց: ԱՄՆ-ը մինչեւ անգամ ակամա նպաստեց նոր կազմավորվող ժողովրդավարական ինստիտուտների այլասերմանը Կովկասում՝ հարավկովկասյան պետություններ, որոնց թվում՝ Հայաստան ներարկելով վարկերի, դրամաշնորհների՝ այդ երկրների համար ահռելի չափաբաժիններ, որոնց նպատակային .իրականացման արդյունավետությունը լուրջ եւ հիմնավորված կասկածներ էր առաջացնում հասարակական-քաղաքական շրջանակներում: Այդ կասկածները հաճախ էին հրապարակային հետազոտությունների եւ մեկնաբանությունների տեղիք տալիս, բայց դրանք ափ չէին հասնում՝ անհետանալով Ատլանտյան օվկիանոսի ալիքներում: Մինչդեռ մի կողմից՝ մեծաթիվ վարկային միջոցները, չունենալով ծախսերի վերահսկման մեխանիզմներ, մեծապես նպաստեցին պետական համակարգի կոռումպացվածությանը, մյուս կողմից՝ հասարակական կառույցներ ներարկելով դրամաշնորհների ոչ նվազ քանակություն, Վաշինգտոնի կողմից ֆինանսավորվող տարանուն միջազգային կազմակերպությունները հիմնովին այլասերեցին հանրային ինստիտուտների գաղափարը՝ սնելով անհասկանալի խնդիրներով ու նպատակներով արհեստածին այնպիսի կառույցներ, որոնք համալրեցին ժողովրդավարության ճանապարհին դրված արգելապատնեշների թիվը: Իրավիճակը, չնչին բացառություններով, կրկնվում էր նաեւ Ադրբեջանում եւ Վրաստանում:

4. Թվում էր, թե իրողությունների այսօրինակ զարգացումը ձեռնտու էր Վաշինգտոնին, ուր մեկ միասնական Կովկաս ստեղծելու հիմնագուրկ գաղափարին փորձում էին արհեստական շնչառություն հաղորդել: ԱՄՆ-ում կարծում էին, որ այս խնդրի արագ լուծման համար Կովկասում պետք էր ավելի շատ խթանել երկրների ու ժողովուրդների նմանությունները, իսկ տարբերությունները՝ մոռացնել:

Այստեղ եւս ԱՄՆ-ի կովկասյան քաղաքականության կանխատեսումներն ու ձգտումները չարդարացան: Մասնավորապես Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, եթե ներքին քաղաքականությունը ասիճանաբար մոտեցնում էր նմանությունների սահմանները, ապա այդ երկրների արտաքին քաղաքական ուղեգծերը չունեին ընդհանուր եզրեր, եթե անտեսենք, որ դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ընդհանուր լուծումներ էին փորձում գտնել Հայաստանը եւ Ադրբեջանը: Երեւանը, Թբիլիսին եւ Բաքուն միանգամայն տարբեր արտաքին քաղաքական կողմնորոշիչներ ու գերակայություններ էին ընտրել: Շեւարդնաձեի իշխանության գալուց հետո Թբիլիսին անշեղորեն հակվում էր դեպի Արեւմուտք՝ ասիճանաբար կտրվելով Ռուսաստանից: Մոսկվայից հեռանում էր նաեւ Բաքուն՝ կողմնորոշվելով դեպի Անկարա: Հարավային Կովկասում Մոսկվան կորցնում էր իր հենասյուները, ուստիեւ Հայաստանի կորուստը ճակատագրական կարող էր լինել: Այդ հեռանկարի հետ Ռուսաստանը չէր կարող հաշտվել:

Այսօրինակ իրավիճակում Հայաստանում ռուսական ուժերը չէին կարող հանգիստ նստել: Վերջին դեպի Ռուսաստան կողմնորոշվելու հայկական ձգտումն արթնացավ, իսկ դրա համար բոլոր հիմքերն արդեն իսկ կային. 1995-ից հետո Հայաստանում ձեւավորված իշխանության տարբեր ճյուղերի ոչ լեգիտիմությունը երեւանին ասիճանաբար հեռացրեց արեւմտյան արժեքներից՝ նրան ավելի ու ավելի մոտեցնելով Մոսկվային, թեպետ Մոսկվան ժողովրդավարության կայացման առումով, առանձին նահանջներից բացի, լուրջ առաջընթաց էր ապրել: Ազգային ինքնության վերագտնման տարիներին պարանոիդված հայ ազգաբնակչության ռուսատեաց հատվածը սկսեց ազգային ուժերից վրեժ լուծել սեփական նահանջի համար: Ռուսատեաց տրամադրությունների ածման կորը հաճախ էր սպառնալիք դառնում Հայաստանի անկախության համար:

Չնայած Հայաստանի հարավային սահմաններին ռուսական զորամիավորումների առկայությանը, 1997 թ. կնքված հայ-ռուսական Մեծ պայմանագրին՝ Վաշինգտոնում առանձնապես չէին պատկերացնում, որ ԱՄՆ-ը նահանջում էր իր՝ առանց այն էլ անկայուն դիրքերից: Այս հանգամանքը լրջորեն վտանգում էր թե ընդհանրապես տարածաշրջանի, թե մասնավորապես՝ Հայաստանի արտաքին քաղաքական փխրուն հավասարակշռությունը: Իսկ ֆինանսատնտեսական, քաղաքական, տեղեկատվական, կրթական ոլորտներում Հայաստանը այնպես էր բաժանվել հիմնականում ռուսական եւ ամերիկյան ազդեցության գոտիների, որ թվում էր, թե այս ոլորտներում մեր երկրին այլեւս ոչինչ չի մնացել: Ավելի հաճախ ռուսական եւ ամերիկյան ազդեցության հայ գործիչների միջեւ ընթացող պայքարն այնքան բացահայտ էր, որ զավեշտի կարող էր վերածվել, եթե այդքան ողբերգական չլիներ:

Այսօրինակ իրավիճակում ազգային ուժերը, հիմնականում դուրս մղվելով պետական կառավարման համակարգից, դարձան փոթաքահար ու կծկված: Դրան նպաստում էր նաեւ արտաքին ուժերի մասնակցությամբ ձեւավորվող հանրային կարծիքը: Ասիճանաբար գերիշխող դարձող ադազգայնության մթնոլորտը նպաստեց, որ առանձին շրջանակներ անթաքույց պայքար մղեն Հայաստանի անկախության դեմ: Ավելի դյուրին էր հայկական սայլը կապել ռուսական ձիուն եւ հեռանալ ԱՄՆ, քան պահպանել անկախությունն ու արեւմտյան արժեքները:

Արտաքուստ քամահրելով, սակայն ներքուստ տագնապ զգալով ազգային ուժերից, Վաշինգտոնը եւս անմասն չէր նրանց դեմ տարվող պայքարից՝ կովկասյան պետություններում որոնելով նրանց, ովքեր պատրաստ էին վաճառել սեփական երկիրը անձնական բարեկեցության համար: Այսօրինակ իրավիճակը Հայաստանին ավելի հեռացրեց ԱՄՆ-ից, եւ հասարակական լայն շրջանակներ սկսեցին քամահրել ժողովրդավարական արժեքները՝ դրանք հակադրելով ազգայինին, ինչն էլ նպաստեց ազգայինի խեղաթյուրված ընկալմանը:

Վանելով Կովկասում ներդրած իր կարողությունները՝ Վաշինգտոնը կանգնեց այստեղից դուրս մղվելու իրական վտանգի առջեւ: Ժամանակ առ ժամանակ այդ վտանգն այնքան մոտ էր, որ թվում էր, թե ԱՄՆ-ի՝ այստեղ մնալ-չմնալու խնդիրը կախված է ոչ թե հարավկովկասյան պետությունների ցանկություններից, այլ՝ բացառապես Ռուսաստանի կամքից:

5. Պետությ tr, որ Մոսկվան ուներ լուրջ հաղթաթուղթ՝ հայ-թուրքական միջպետական հարաբերությունների չգոյությունը, Հայաստանի ու Թուրքիայի միջեւ առկա եւ չմարող բենամանը, ինչի «շնորհիվ» Հայաստանի հարավային սահմաններում ամրանալը Մոսկվայի կովկասյան քաղաքականությանը երկրորդ շնչառություն կհաղորդեր: Վաշինգտոնը դա լավ էր գիտակցում, ուստի անհրաժեշտ էր մեղմել առկա բենամանը: ԱՄՆ-ը փորձեց զգուշորեն աջակցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման քայլերին, ինչը, տարաբնույթ պատճառներով, արդյունք չտվեց: ԱՄՆ-ն այս դեպքում եւս սխալված եղավ քաղել արմատական քայլեր անելու անկարողության պտուղները. Կոնգրեսում 1915 թ. Ցեղասպանությունը ճանաչելու, անգամ Անկարայից նույնը պահանջելու փոխարեն Վաշինգտոնը վանգեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Ի տարբերություն Երեւանի, որը, այդպես էլ չյուրացնելով քաղաքականության պարտադիր կանոնները, անվերապահորեն ընդառաջ էր գնում իր ռազմավարական գործընկերոջ՝ Մոսկվայի ցանկություններին ու պահանջներին, Անկարան լավ էր հասկանում ռազմավարական իր գործընկերոջ՝ Վաշինգտոնի ասածները եւ այդ օրերին իր քարոզչական մեքենայի օգնությամբ ԱՄՆ-ին քաղաքականության դասեր էր տալիս. «Սփյուռքի «հայկական ցեղասպանության» գործունեությունը վանգի տակ է դնում ԱՄՆ-ի ամենակարեւոր ռազմավարական գործընկերներից մեկի՝ Թուրքիայի հետ հարաբերությունները: Թուրքիայի աշխարհագրական դիրքը եւ յուրահատուկ կարգավիճակը որպես մահմեդական աշխարհում գործող ժողովրդավարական միակ երկիր, նրան դարձնում է ԱՄՆ-ի անփակելի դաշնակիցը: Այս գործոնները նրան դարձնում են թիրախ Ռուսաստանի, Հայաստանի, Իրանի, Սիրիայի եւ նրանց համար, ովքեր հակադրվում են արեւմտյան արժեքներին, ցանկանում են թուլացնել ՆԱՏՕ-ն, որի արեւելյան հենակետը՝ Թուրքիան, հաճախ սխալված է եղել պաշտպանել ԱՄՆ-ի շահերը: Կայուն, աղահով Թուրքիան, որը խիստ կապված է Արեւմուտքի հետ, անգնահատելի հակակշիռ է այս եւ այլ վանգավոր ու անցանկալի զարգացումների համար: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ Ներկայացուցիչների պալատը սանձահարներ՝ առանց խանգարելու ԱՄՆ-ի կենսական շահերին» (Turkish Daily News, 2000 թ., հոկտեմբեր):

Վիճակը նեսված էր, եւ հերթական անգամ ԱՄՆ-ը կանգնեց ընտրության առջեւ: Վերահաստատելով տարածաշրջանային իր գերակայությունները՝ ԱՄՆ-ը վերստին ընտրեց Թուրքիային, որը գրեթե իր բոլոր դրկիցների հետ չկարգավորված հարաբերություններ ուներ: Այդ ընտրությամբ Վաշինգտոնը կարող էր կորցնել Երեւանին:

Միաժամանակ ԱՄՆ-ում հասկանում էին, որ Կովկասում ամերիկյան արտաքին քաղաքականության նահանջի մեջ լուրջ մասնաբաժին ունի նաեւ Երեւանը՝ դեռի հյուսիս ունեցած կողմնորոշման, ժողովրդավարական արժեքների ոտնահարման, դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորումն ավարտին չհասցնելու պատճառով, իսկ խաղաղ կարգավորման հարցում ԱՄՆ-ի ցանկությունն ու շահագրգռվածությունը կասկածների տեղիք չէին տալիս. գերտերություններից նախեւառաջ ԱՄՆ-ին էր ձեռնտու խաղաղ եւ կայուն Կովկասը, քանի որ ամերիկյան քաղաքական եւ ֆինանսական կապիտալը միայն խաղաղ պայմաններում կարող էր էական արդյունքներ տալ: Միաժամանակ չընկալելով հիմնախնդրի ծագման ու խորացման պատճառները, Վաշինգտոնն այս դեպքում էլ ընկավ իր իսկ մասնակցությամբ ձեւավորված դարանը՝ պատեպաս խփվելով տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման հակասությունների շրջանում: Հանուն ճշմարտության պիտի ասել, որ Վաշինգտոնը հիմնախնդրի կարգավորման առումով Երեւանի ու Ստեփանակերտի վրա առանձնապես մեծ ճնշում չգործադրեց, ինչն առաջացնում էր Բաքվի ու Անկարայի նյարդային տարակուսանքը: Վաշինգտոնը որոշեց նախ տեղում սուզել եւ ապա՝ «մշակել» հանրային կարծիքը՝ հայերին եւ ադրբեջանցիներին հաշտեցնելով փոխզիջման գաղափարի հետ: ԱՄՆ-ի այդօրինակ վարքագիծը դարձյալ արդյունք չտվեց, քանի որ կողմերը լավ էին պատկերացնում փոխզիջումների իրական հետեւանքները:

Կովկասում Վաշինգտոնն իրար հետեւից հանձնում էր իր դիրքերը՝ դիվանագիտական պարտություններ արձանագրելով Քի Վեսթում, Փարիզում, Ժնեւում:

6. Չնայած ԱՄՆ-ի աջակցությամբ «երրորդ աշխարհի» երկրներում իրականացող տնտեսության ազատականացումը առաջին իրական պտուղները տվել էր Հայաստանում, սակայն ամերիկյան կապիտալը երկարատեւ ներդրումների իրականացման եւ նոր շուկաների որոնման համար ավելի հաճախ գերադասում էր վայրէջք կատարել Բաքվում ու Թբիլիսիում՝ երեւանին փոխհատուցելով 907 բանաձեւի գործողությամբ: Ըստ ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության տեղեկանքի՝ 1991-2001 թթ. ընթացքում ԱՄՆ-ը Հայաստանին է տրամադրել 1,4 մլրդ. դոլարի մարդասիրական եւ տեխնիկական օժանդակություն: Եթե 92-97 թթ. մարդասիրական օժանդակությունը ԱՄՆ հատկացումների զգալի մասն էր կազմում, ապա 1997-ից հետո առաջնությունը տրվեց տեխնիկական օժանդակությանը:

Միաժամանակ սեպտեմբերյան ողբերգությունից հետո ակնհայտ էր դառնում, որ ԱՄՆ-ը կարծրացնելու է իր տարածաշրջանային քաղաքականությունը: Բնականաբար, դրա պտուղները պետք է զգար նաեւ Երեւանը, որը սխալված եղավ նախ կուլ տալ 907-ի առկախման դառը հաբերը, ապա՝ հաշտվել իրականության հետ, երբ արտգործնախարար Օսկանյանը, հարդարացում սեփական դիվանագիտական պարտության, հայտարարեց. «Ինչպես ամերիկյան կառավարությունն է հասկանում, որ Ադրբեջանը չի վերացրել Հայաստանի հանդեպ շրջափակումը եւ, հետեւաբար, չի կարող անսահմանափակ օգնություն ստանալ ԱՄՆ-ից, այնպես էլ Հայաստանի կառավարությունն է հասկանում, որ ահաբեկչության դեմ արդյունավետ պայքար մղելու համար ԱՄՆ-ի վարչակազմից որոշակի ճկունություն է պահանջվում Ադրբեջանում»:

Ակնհայտ էր, որ ՆԱՏՕ-ի բառարաններից հայտնի «կոմպլեմենտարիզմի»՝ «հավասար զինաթափման» քաղաքականությունը, չնայած երեւանի շարունակական հավաստիացումներին, այդպես էլ չէր իրականացել: Վաշինգտոնի քաղաքականության կածրացմանը զուգահեռ Երեւանի նկատմամբ կարծր ու կոշտ էր դառնում նաեւ Մոսկվան: Միջպետական հարաբերություններում սառնության եւ կարծրության դրսեւորումները ազդարարում էին երկկողմ քաղաքականության էական փոփոխություններ: Սեպտեմբերյան իրադարձությունները առիթ դարձան, որ Մոսկվան ու Վաշինգտոնը միմյանց հետ սկսեն կովկասյան քաղաքականության ուղեգծի ճշգրտման գործընթացը: Այդ գործընթացում Հայաստանը, ցավոք, այլեւս մասնակցություն չունի, քանի որ սպառել է տարածաշրջանային գործոն լինելու ներուժն ու հեռանկարը, ըստ այդմ՝ դադարելով Մոսկվայի ու Վաշինգտոնի համար իրավահավասար գործընկեր ընկալվել:

Մշտապես նախապատերազմական եւ պատերազմական իրավիճակում գտնվող Կովկասը Վաշինգտոնի համար ասիճանաբար կորցնում է իր հրապույրը: Առավելագույնը, որին այսօր ձգտում է ԱՄՆ-ը, հնարավորինս «մոտ գտնվել» հաղորդակցության ուղիներին, գազամուղի եւ նավթամուղի տարածաշրջանային տարաբնույթ ծրագրերին: Իսկ ժողովրդավարական եւ հասարակական ինստիտուտների, անկախ, անկաշառ դատաիրավական համակարգի կայացումից իրապես նահանջելով, ըստ էության՝ հրաժարվելով նախատեսված բարձունքները գրավելու հեռանկարից, Վաշինգտոնը կարող է թեթեւացած շունչ քաշել, մանավանդ որ խիղճը հանգիստ է՝ ժողովրդավարական համակարգի «կայացման» համար միջոցներ չի խնայել:

Ի վերջո՝ ԱՄՆ-ի օգտապատությունն այս դեպքում եւս արդարացված է՝ Մոսկվան Կովկասը չի հանձնի, իսկ ժողովրդավարության առումով արժե՞ արդյոք ժամանակ վատնել կովկասյան պետություններում, եթե այդ երկրների իշխանություններն ու հասարակությունը փախչում են ժողովրդավարությունից, ինչպես գարնանային հորդառատ անձրեւից:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Պակիստանը ճանաչեց Հյուսիսային դաշինքի կառավարությունը

Պակիստանի նախագահ Փերվեզ Մուշարաֆն իր հեռուստաելույթում առաջին անգամ հայտարարեց, որ Իսլամաբադը ճանաչում է Հյուսիսային դաշինքը եւ դրա կազմի մեջ մտնող բոլոր խմբավորումները: Նա ընդգծեց, որ «Հյուսիսային դաշինքի կողմից Քաբուլի գրավումը վտանգ չի ներկայացնում Պակիստանի համար»: Մուշարաֆը հավանություն տվեց Աֆղանստանում ժողովրդական լայն ներկայացուցչության կառավարություն ստեղծելու ՄԱԿ-ի ջանքերին: Նրա կարծիքով, դա անհրաժեշտ կլինի բարեկամական կառավարություն, քանի որ Աֆղանստանը «զգալի չափով կախման մեջ է» Պակիստանից:

Մուշարաֆը գտնում է, որ ազատատեր եւ հոգատար աֆղաններին պարզապես անհնար է դրսից պարտադրել որեւէ կառավարություն: Աֆղաններն իրենք պետք է ընտրեն իրենց ապագան, իսկ միջազգային ընկերակցությունը պետք է աջակցի դրան, ինչպես նաեւ օգնի երկրի տնտեսության եւ ենթակառույցների վերականգնմանը: Պակիստանի նախագահի կարծիքով, չի կարելի բոլոր փուշտուներին նույնացնել թալիբների հետ: «Փուշտուների մեծ մասը երբեք չի եղել թալիբների կողմնակից, իսկ թալիբ ղեկավարների մեջ կան չափավորականներ, որոնք կարող են մասնակցել Աֆղանստանի ապագա քաղաքական կառույցին», ընդգծեց Մուշարաֆը:

Պակիստանյան «Նյուզ» թերթի տվյալներով, Իսլամաբադն արդեն կապեր է հաստատում Հյուսիսային դաշինքի հետ եւ նույնիսկ բանագնացներ է ուղարկել նախագահ Ռաբանիի եւ գեներալ Դոստումի մոտ:

Կուչմայի իրավահաջորդի անունը հայտնի է

Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման անակնկալ մատուցեց երկրի բնակչությանը՝ հրապարակելով ապագա նախագահի անունը: Դա նախագահի վարչակազմի ներկայիս ղեկավար Վլադիմիր Լիտվինն է, մինչդեռ Ուկրաինայում վերջերս Կուչմայի առավել հավանական իրավահաջորդ էին համարում նախկին վարչապետ Վիկտոր Յուշչենկոյին: Վերջինս այժմ հայտնվել է ստվերում, քանի որ չափազանց սերտ կապեր ունի «գազի ուկրաինական թագուհու» նախկին փոխվարչապետ Յուլիա Տիմոշենկոյի հետ:

Կուչման հայտարարում է, թե Լիտվինը «հեռանկարային քաղաքական գործիչ» է: Այս կապակցությամբ «Իզվեստիայի» կիեւյան թղթակիցը հիշեցնում է, որ նա անցյալում նույն բնութագրումն էր տալիս Յուշչենկոյին: Կուչման պատշաճում է աջ կենտրոնամետ «Հանուն միացյալ Ուկրաինայի» ընտրական դաշինքը գլխավորելու Լիտվինի ծրագիրը: Նախագահը չի մոռացել, որ ինքը Լիտվինի կազմակերպական ձիրքի շնորհիվ է 1994 թ. հասել իր բարձր պաշտոնին:

41-ամյա Վլադիմիր Լիտվինը ծնվել է Ժիտոմիրի մարզում: Անցյալում նա պատմաբան էր եւ Կիեւի համալսարանի դասախոս: Կուչմայի նախագահ ընտրվելուց հետո Լիտվինը չհեռացավ նրանից, թողեց պատմագիտությունը, եւ այժմ ինքն է «պատմություն կերտում»: Ուկրաինայում նա «գորշ կարդինալի» համբավ ունի: Իշխանության վերին ոլորտներում ասում են, թե անցյալ տարի Լիտվինը կարող էր կրկնել Ռուսաստանի տարբերակը եւ նախագահ դառնալ, բայց խանգարեցին այսպես կոչված «կասետային սկանդալը» եւ «Կուչմագեյթը»:

Կուչման այսօր պնդում է, թե նախագահության համար 3-րդ անգամ չի դնի իր թեկնածությունը: Նա ընտրել է բարեհույս իրավահաջորդի, որը 2-ական անգամ հաջողությամբ կազմակերպել է նախագահական եւ խորհրդարանական ընտրություններ: Լիտվինը ոչ միայն Վլադիմիր Պուտինի անվանակիցն է, այլեւ արտաքուստ նման է նրան:

Եվրոն դժվար թե դառնա դոլարի մրցակիցը

Եվրամիության միասնական դրամաշրջանը՝ եվրոն, ազգային վճարամիջոցներին փոխարինելու է 2002 թ. հունվարի 1-ից, բայց արդեն այսօր ոմանք կանխատեսումներ են անում, թե դառնալու է դոլարի ուժեղ մրցակիցը եւ աշխարհի երկրորդ ընդհանուր վճարամիջոցը: Սակայն 1999 թ. հունվարից ԵՄ 11, ապա 12 պետություններում ազգային արժույթներին զուգահեռ օգտագործվող եվրոն անցած շուրջ 3 տարում որեւէ էական փոփոխություն չմտցրեց համաշխարհային ֆինանսական շուկաներում: Տնտեսագետներից շատերը գտնում են, որ դոլարի մրցակիցը դառնալու համար եվրոն պետք է ունենա նրա հուսալիությունը: Ուրիշներն էլ նշում են, որ այդ հուսալիությունը հիմնված է լոկ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի «ազնիվ խոսքի» վրա, քանի որ 1971 թ. նավթի համաշխարհային գների կտրուկ վայրիվերումների օրերին նախագահ Ռիչարդ Նիքսոնը վերացրեց ազգային արժույթը ոսկով ապահովելը:

Դրանից հետո ԱՄՆ-ը անընդհատ դոլար էր տպում եւ աջ ու ձախ վարկեր տալիս: «Իզվեստիա» թերթի տվյալներով, ներկայումս ԱՄՆ-ից դուրս գտնվող դոլարների ընդհանուր գումարը կազմում է 8,5 տրիլիոն: Տնտեսագետներից ոմանք այն տեսակետն են արտահայտում, որ եթե բոլոր օտարերկրացիները միաժամանակ փորձեն ազատվել իրենց դոլարներից, ապա ամերիկյան դրամական համակարգի բուրգն արագորեն կփլուզվի ռուսաստանյան տխրահռչակ MMM ապահովագրական ընկերության պես:

Տարբերությունն այն է, որ Մավրոդիի ֆինանսական կայուրությունը հիմնված էր խարդախությունների վրա, մինչդեռ դոլարի կայունության հիմքն ԱՄՆ-ի տնտեսական զորությունն է: Օտար պետություններն ու քաղաքացիներն իրենց դոլարային պահուստներով անուղղակիորեն օժանդակում են ամերիկյան տնտեսությանը: Այսօր աշխարհում իրականացվող առեւտրային գործարքների ծավալի մոտ կեսն արտահայտվում է դոլարներով: Ֆինանսական բոլոր գործառնությունների 80 տոկոսի դեպքում կողմերից մեկը վճարում կամ ստանում է դոլարով: Աշխարհի տարբեր երկրների արտարժույթի պահուստների մոտ 60 տոկոսը դոլարային է:

Այսպանից հետո ակնհայտ է դառնում, որ եվրոն դժվար թե դառնա դոլարի լուրջ մրցակիցը: 1999 թ. հունվարից մինչեւ օրս եվրոն արժեզրկվել է 35 տոկոսով, մինչդեռ վստահություն ձեռք բերելու համար առաջին հերթին անհրաժեշտ է կայունություն:

Պ. Ք.

ԱԶԳ

ՄԱԿԿՈՒՅԹ

ՈԱԿ հոբելյանի առիթով

Երազային հայրենիքը՝ «կորուսյալ դրախտը» Արարատ Սարգսյանի կտավներում

Կյանքը երազի, կամ երազը կյանքի մեջ, ո՞րն է իրական ավելի: Երբեմն թվում է, ամենայն ինչ է պատրանքային, ե՛ւ կա, ե՛ւ չկա: Սա, իհարկե, անցողիկության գաղափարի, իլյուզիայի տխուր մի արձագանքն է, որի սփոփիչ գոյությունը սակայն մարդկության մեծագույն հարստությունն է՝ հիշողությունը: Կորցրած ամեն ինչ ցավ է եւ անընդհատական կարոտ, ինչպես կորուսյալ դրախտն է մարդկության համար երազային եւ որոնելի եղել ի սկզբանե: Այսպես հայն էլ ի լրումն սրա, իր կորցրած հայրենիքի որոնումները շարունակում է ցայսօր, մինչեւ ծերմակաւոր երազի միջից իրականում իրեն կհառնեն Արմիտի վերադարձնենք այս խաղաղները մեզի: Գովելի է, եւ խորհուրդը կորսնցուցած հայրենիքի մորմոքն է: Արվեստի գործեն ավելի գնահատելի է միտքը եւ հոգին», այսպիսին էր ՈԱԿ կենտրոնական վարչության ատենապետ եւ Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Գասարճյանի տպավորությունները:

Սա Արարատ Սարգսյանի այս տարվա 3-րդ անհատական ցուցահանդեսն է՝ Թեհրանում եւ Երեւանի ազգային պատկերասրահում կազմակերպված ցուցահանդեսներից հետո: Աշխատանքները կատարվել են մեկ տարի առաջ: Ըստ նկարչի, սա անցյալի, որ գունաթափված ներկան է, վերարթնացումն է: Թեեւ նկարիչն իր պատկերած խաղաղներից (բացի Շուշիից եւ Ալեքսանդրապոլից) ոչ մեկում չի եղել, բայց երկարատեւ արխիվային պրոցումների շնորհիվ իր մտապատկերում վերակերտել է նրանց տեսքը, կոլորիտը, միջավայրը եւ ապա վերաստեղծագործել այս ամենը: Արեւմտյան Հայաստանի խաղաղների (ի բացառյալ Շուշիի՝ իբրեւ վերադարձած հարստություն եւ Ալեքսանդրապոլի, որ նկարչի անձնական դրախտն է) ամբողջական պատկերաշարում յուրօրինակորեն բացակայում էր խաղաղամայր Անին: «Վերին Երուսաղեմի գաղափարն եմ փորձել խաղարկել: Վերին Երուսաղեմը մի խաղաղ էր երկնքում, որի օրինակով երկրի վրա խաղաղներ էին փորձում կառուցել մարդիկ: Հայերի համար որպես Վերին Երուսաղեմ Անին մնաց...», ասում է նկարիչը:

Ցուցահանդեսին իր բացման խոսքում ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց արվեստագետին, որ կարողացել է ինչպես տեղ թախիծով, հոգեհարազատորեն երկու-երեք գույներով, բայց պայծառ ներկայացնել այսքան բազմերանգ մեր երկիրը: «Թեհեյան մշակութային միության ղեկավարության հետ եկանք եզրակացության, որ այս առիթով ներկայացնենք գանձեր, մեր՝ ազգային, ինչպես տեղ կորցրած գանձերը: Որովհետեւ այդպիսին էին Վանը, Մուշը, Արեւմտյան Հայաստանի մեր օջախները, որոնք այսօր ժամանակավորապես մեզ հետ չեն: Իրապես ոչ ոք չգիտի՝ երբ կվերականգնենք մեր միասնական հայրենիքը, բայց, կարծում եմ, մեծագույն խորհուրդ կա այսօրվա մեջ եւ շնորհիվ գեղանկարիչ Արարատ Սարգսյանի՝ կրկին հայտնվել ենք ազգային դրախտում: Մենք՝ ռամկավարներս, ինչպես եւ մյուս ավանդական կուսակցությունները բազմաթիվ տաղանդաշատ երիտասարդներ հեռանում են Հայաստանից՝ այլ երկրներում կայանալու համար: Սակայն մխիթարող է այն, որ հայաստանյան «աղբյուրը» շատ առատ է, եւ բոլոր տաղանդները չեն, որ արտագաղթում են: Այսօրվա հրաշամանուկների համերգը ասածիս ապացույցն է, նշեց ՈԱԿ փոխատենապետ Երվանդ Ազատյանը:

Մ. Հ.



նին, Կարսը, Արդահանը, Մուշը, Վանը, Բիթլիսը, Ադանան, Եդեսիան, Զեյթունը, Այնթապը, Մանազկերտը...

Երազային հայրենիքի ամբողջական պատկերն էր փորձել վերականգնել գեղանկարիչ Արարատ Սարգսյանը «երկիր դրախտավայր» նկարաշարով, որ երկուշաբթի երեկոյան ներկայացվեց «Գոռ» պատկերասրահում: Ցուցահանդեսը նվիրված էր Ռամկավար Ազատական կուսակցության հիմնադրման 80 եւ Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հիմնադրման 10-ամյակներին:

Նկարչի 20 աշխատանքները (յուղաներկ) ներկայացնում էին պատմական Հայաստանի խաղաղները՝ յուրաքանչյուրն իրեն բնորոշ առանձնահատկությամբ: Առաջին տպավորությունը գունային մոնոտոնայնության «տարակուսանքն» էր, սեւի ու ծերմակի զուգորդումով՝ նրբերանգների շատ հղանցիկ, աննշմարելի ուրվագծումներով: Շրջելով պատկերից պատկեր եւ մի պահ վերացարկվելով միջավայրից՝ սրահի տարածությունն ասես լցվում է քեզ եւ, թվում է, հայտնվում ես պատկերային իրականության մեջ՝ «կորուսյալ դրախտում», բանաստեղծի երազած կաղուտաչյա հայրենիքում:

Մտահղացման մեջ՝ թեմատիկ եւ կառուցվածքային ամբողջություն իբրեւ, ցուցադրությունն ինքնատիպ էր ու հետաքրքրական: «Ցուցահանդեսը սխանչելի է: Միեւնույն ատեն երջանկության եւ հուզումի պահեր կարդինի: Հուզում այն իմաստով, որ ասիկա կներկայացնե մեր՝ ծեւով մը ջարդը, հայ դասը: Այսօր մենք այս խաղաղներու մեջեն կտեսնենք մեր իրավունքները: Կորսնցուցած ենք դժբախտաբար այս խաղաղները, բայց հուսով եմ, որ օր մը իրավունքը իր իրավատերերուն պիտի տրվի եւ մենք նկարիչը իր պատկերած խաղաղներից (բացի Շուշիից եւ Ալեքսանդրապոլից) ոչ մեկում չի եղել, բայց երկարատեւ արխիվային պրոցումների շնորհիվ իր մտապատկերում վերակերտել է նրանց տեսքը, կոլորիտը, միջավայրը եւ ապա վերաստեղծագործել այս ամենը: Արեւմտյան Հայաստանի խաղաղների (ի բացառյալ Շուշիի՝ իբրեւ վերադարձած հարստություն եւ Ալեքսանդրապոլի, որ նկարչի անձնական դրախտն է) ամբողջական պատկերաշարում յուրօրինակորեն բացակայում էր խաղաղամայր Անին: «Վերին Երուսաղեմի գաղափարն եմ փորձել խաղարկել: Վերին Երուսաղեմը մի խաղաղ էր երկնքում, որի օրինակով երկրի վրա խաղաղներ էին փորձում կառուցել մարդիկ: Հայերի համար որպես Վերին Երուսաղեմ Անին մնաց...», ասում է նկարիչը:

Ցուցահանդեսին իր բացման խոսքում ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց արվեստագետին, որ կարողացել է ինչպես տեղ թախիծով, հոգեհարազատորեն երկու-երեք գույներով, բայց պայծառ ներկայացնել այսքան հետաքրքրական մեր երկիրը: «Թեհեյան մշակութային միության ղեկավարության հետ եկանք եզրակացության, որ այս առիթով ներկայացնենք գանձեր, մեր՝ ազգային, ինչպես տեղ կորցրած գանձերը: Որովհետեւ այդպիսին էին Վանը, Մուշը, Արեւմտյան Հայաստանի մեր օջախները, որոնք այսօր ժամանակավորապես մեզ հետ չեն: Իրապես ոչ ոք չգիտի՝ երբ կվերականգնենք մեր միասնական հայրենիքը, բայց, կարծում եմ, մեծագույն խորհուրդ կա այսօրվա մեջ եւ շնորհիվ գեղանկարիչ Արարատ Սարգսյանի՝ կրկին հայտնվել ենք ազգային դրախտում: Մենք՝ ռամկավարներս, ինչպես եւ մյուս ավանդական կուսակցությունները հետաքրքրվել եւ հետաքրքրվելու ենք մեր դասը, եւ այն հայը, որ չի ընդունում մեր ազգային բարձրագույն նպատակներից մեկը, հայ կոչվելու իրավունք չունի»:

Երեկոյի մթնոլորտը նկարների խորհուրդով էր պայմանավորված անշուշտ, ինչպես եւ հավաքված հանրությամբ՝ նաեւ սփյուռքահայ մտավորականություն, որն իր հոգու խորքերում իբրեւ թանկ հիշողություն եւ ձգտում միշտ է ունեցել հայրենիքի ամբողջական պատկերը եւ այն վերականգնելու հույսը: Հիրավի, ստեղծվել էր կարոտի, վերհուշի տրամադրություն՝ ծերմակ երազի պատրանքով, բայց եւ վերադարձի հավատով, որովհետեւ անցյալն ապրում է այնքան, որքան նրա հուշը... «Երազի գույներով է նկարել հայոց խաղաղները նկարիչը, ասում է մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանը: Ինքնատիպ մոտեցում է մեր անցյալին, մեր երազային հայրենիքին: Ուշադիր նայելով՝ միայն սեւ ու սպիտակ գույներ չէ, որ կտեսնես, ուրիշ գույներ էլ կան: Սա կորուսյալ դրախտն է, մեր երազը...»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Լիբանանահայ հեղինակի գիրքը տպագրվեց հայրենիքում

Հայ ընթերցողն այսուհետ հնարավորություն կունենա կարդալու լիբանանահայ գրող-արձակագիր Արամ Սեփեթճյանի ստեղծագործությունների ժողովածուն: Սա սփյուռքահայ հեղինակի հինգերորդ հրատարակությունն է, սակայն հատկանշական է նրանով, որ ի տարբերություն մյուսների՝ լույս է տեսել հայրենիքում: «Հող եւ մորմոք» վերնագիրը կրող ժողովածուն հրատարակել է Հայաստանի գրողների միությունը: Ռամկավար Ազատական կուսակցության անդամ Արամ Սեփեթճյանի նոր գրքի ծնունդը համընկել է ՈԱԿ 80-ամյակի եւ ՀՈԱԿ 10-ամյակի հոբելյանների տոնական հանդիսությունների հետ, եւ նոյեմբերի 25-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ «Հող եւ մորմոք» ժողովածուի շնորհանդեսն ու գինեծոնը: Հեղինակի այս եւ նախորդ գրքերից իրենց ստացած տպավորությունները կիսեցին Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, սփյուռքահայ գրականության մասնագետ դոկտ. Սուրեն Դանիելյանը, գրող եւ քննադատ Ալեքսանդր Թոփչյանը, ամերիկահայ գրաքննադատ Երվանդ Ազատյանը: Վերջում իր երախտագիտության խոսքն ուղղեց հեղինակը:

«Սփյուռքում ծնված յուրաքանչյուր հայալեզու գրքի հրատարակությունը հայրենիքում իրադարձություն է եւ հայրենիք-սփյուռք մշակութային հարաբերություններում եղած պատնեշը կոտրելու համար լուրջ հարված», գրքի հրատարակման առիթով նշում էին ներկաները: Հեղինակին շնորհավորելու եկած հայաստանցի եւ սփյուռքահայ հյուրերի համար ելույթ ունեցան հայ փոքրիկ երաժիշտները: «Նոր անուններ» ծրագիրն իր շուրջն է համախմբել հանրապետության երաժշտական կրթօջախների լավագույն սաներին, որոնք ելույթ են ունեցել աշխարհի տարբեր բեմերում եւ տուն են վերադարձել՝ իրենց հետ բերելով առաջին մրցանակներ: Փոքրիկ երաժիշտներից ոմանք էլ անձամբ ծանոթ էին սփյուռքահայ ռամկավարներից շատերի հետ՝ հանդիպել էին համերգային շրջագայության ժամանակ, հյուրընկալվել էին նրանց: Վստահաբար կարելի է ասել, որ այս հրաշամանուկների անունները մենք դեռեւս շատ առիթներ կունենանք լսելու՝ Լիլիթ Գրիգորյան, Գուրգեն Գալստյան, Մհեր Մնացականյան, Հայրապետ Առաքելյան...

«Իհարկե, ցավալի է, որ բազմաթիվ տաղանդաշատ երիտասարդներ հեռանում են Հայաստանից՝ այլ երկրներում կայանալու համար: Սակայն մխիթարող է այն, որ հայաստանյան «աղբյուրը» շատ առատ է, եւ բոլոր տաղանդները չեն, որ արտագաղթում են: Այսօրվա հրաշամանուկների համերգը ասածիս ապացույցն է, նշեց ՈԱԿ փոխատենապետ Երվանդ Ազատյանը:

Մ. Հ.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Որ հավատի տունը հաստատուն լինի

Մատաղ սերնդին քրիստոնեական ուսմունք հաղորդելու, Հայոց առաքելական եկեղեցու պատմությանը, հոգեւոր մշակույթին իրազեկ դարձնելու նպատակով այսօր հանրապետությունում եւ Արցախում գործում են տասնյակ կիրակնօրյա վարժարաններ: Մայր աթոռին կից գործող քրիստոնեական դաստիարակության եւ քարոզի կենտրոնի նախաձեռնությամբ կրոնի համապատասխան դասընթացներն ավարտած հարյուրավոր վարժուհիներ շուրջ 10 տարի լսարաններ են մտնում: Կրոնն արդեն դասավանդվում է նաեւ շատ եւ շատ հանրակրթական դպրոցներում եւ առաջիկայում կդառնա հիմնական առարկաներից մեկը: Էջմիածնում այսօր այդ առաքելությամբ են զբաղված կիրակնօրյա 7 դպրոցներում: Վերջերս հանդիսավոր պայմաններում շրջանավարտներին վկայականներ հանձնելու արարողություն էր տեղի ունենում «Ս. Ներսես Շնորհալի» վարժարանում: Այդ առիթով հանդիպեցինք վարժարանի տնօրեն Վարդուհի Արզումանյանի հետ:

- Արդեն 8 տարվա պատմություն ունի ձեր վարժարանը, քանի՞ շրջանավարտ եք ունեցել եւ ո՞ւր են տանում նրանց հաստատները:

- 45 սաներ այսօր ստացան քարոզի կենտրոնի Ս. վարժարանի վկայականներ, իսկ ընդհանուր շրջանավարտների թիվը հասնում է 100-ի: Նրանց մի մասն իրենց քրիստոնեական կրթությունը խորացնելու համար շարունակում է սովորել Մայր տաճարի Գեւորգյան, Սեւանի Վազգենյան ճեմարաններում, Երուսաղեմի համապատասխան հոգեւոր վարժարանում: Ինչ խոսք, շրջանավարտները սովորում են նաեւ հանրապետության այլ մասնագիտական բուհերում եւ քոլեջներում: Դպրոցում կրոն են դասավանդում բարձրագույն մանկավարժական եւ երաժշտական ուսումնական հաստատություններն ավարտած 9 վարժուհիներ, որոնք ունեն 8 տարվա աշխատանքային փորձ եւ ամբողջովին նվիրված են իրենց գործին:

- Ուսումնական ծրագրերին զուգընթաց դպրոցը տարվա ընթացքում կազմակերպում է բազմաբնույթ կրոնական եւ ազգային տոնական միջոցառումներ, ուխտագնացություններ, հանդես է գալիս նորոգյա հանդիսություններով: Հատկապես ո՞ր տոներն են ավելի զանգվածային բնույթ կրում:

- Իրոք, կիրակնօրյա վարժարանների համար նման հանդիսություններն ավանդական են դարձել եւ առանձնանում են հատկապես Ս. Ծննդյան, Վարդավառի, Զատիկի, Պայծառակերպության, Համբարձման, Էջմիածնին նվիրված եւ ազգային ու տաղավար այլ տոներ, որոնք միշտ էլ անցնում են չմարող հետաքրքրությամբ: Ուշագրավ են նաեւ ուխտագնացությունները: Վարժուհիները եւ սաները ոչ միայն ծանոթանում են հանրապետության, Արցախի, Վրաստանի հայաբնակ վայրերում գտնվող վանքերի ու եկեղեցիների պատմությանը, այլեւ մասնակցում տեղի ունեցող հանդիսություններին, որոնք նվիրված են լինում սրբերին ու առաքյալներին կամ կրոնական տոներին:

- Դժվարություններ, պրոբլեմներ կան մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում: Անհանգստացնող խնդիրներ կիրակնօրյա վարժարաններում էլ կա՞ն:

- Լավ կլիներ, եթե սաները ապահովված լինեին բոլոր առարկաների դասագրքերով, թեեւ քրիստոնեության դաստիարակության եւ քարոզի կենտրոնն ամեն ինչ անում է: Չէ որ կրոնի դասավանդման, կիրակնօրյա վարժարաններ ստեղծելու որոշումից հետո ընդամենը 8 տարի է անցել: Եթե զինվենք համբերությամբ, դրանք էլ կհարթվեն: Վարժարանում դասավանդող ուսուցիչներն ունեն ազնիվ ու սրբազան նպատակ՝ առաջնորդել մատաղ սերնդին դեպի ազնիվն ու բարին, դեպի հավատը տանող ճանապարհով, իսկ դժվարությունները, լիահույս ենք, որ կհարթվեն:

Ավելացնենք, որ վարժուհիները ապահովված են ուսումնական բոլոր տեսակի ուղեցույց ծրագրերով, մեթոդական եւ դասավանդվող առարկաների դասագրքերով: Դասավանդվում են հին ու նոր կտակարաններ, հայոց եկեղեցու պատմություն, հոգեւոր երաժշտություն, եկեղեցական տոներ առարկաները:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Լավ ավանդույթի սկիզբ

Երեւանում վերջերս անցկացվեց մանկապատանեական «Նռան հատիկ» թատերական փառատոնը՝ հովանավորությամբ գերբ. Մեսրոպ արք. Աբեղյանի: Մայրաքաղաքի դպրոցների (Պուշկինի, Գ. Հովսեփյանի, Գր. Զոհրապի, Ղ. Աղայանի, Ավ. Իսահակյանի), մանկապատանեական թատերական ստուդիաների սաների մասնակցությամբ նման տեսողությամբ (1 ամիս) եւ ընդգրկումով այս միջոցառումը նախադեպը չէր ունեցել մայրաքաղաքում:

Թատերական խմբերը հանդես եկան «Մեսրոպ», «Համազգային» թատրոնների եւ այլ բեմահարթակներում: Երեւանի Գ. Հովսեփյանի անվ. թիվ 30 դպրոցի վալդորֆյան 6-րդ եւ 7-րդ դասարանների աշակերտները հանդիսականին ներկայացրին հին հույն թատերգակ Էսքիլեսի «Պրոմեթեւսը շղթայված» պիեսը (գեղ. ղեկ.՝ Ա. Ադոնց) եւ «Ժոնգլյորը» ֆրանսիական միջնադարյան լեգենդը (գեղ. ղեկ.՝ Ա. Աթայան):

Իմաստային բազմաշերտությամբ միջնադարյան ֆրանսիական իրականության մասին պատմող «Ժոնգլյորը» լեգենդում շոշափվում են մարդու հոգեւոր կյանքի բավականին լուրջ ասպեկտներ: Նյութի հագեցվածությունը, ենթաշերտի խորքային ընկալումը պատանիների համար այնքան էլ դյուրին չէր (ներկայացմանը նախորդել էր բավականին լուրջ եւ խնամքոտ աշխատանք), բայց ի պատիվ պատանիների պիտի ասել, որ նրանք կարողացան հանդիսատեսին հասցնել նյութի բուն ասելիքը. ստեղծելով միջնադարյան կոլորիտ՝ զգեստավորման, երաժշտական ճաշակավոր ձեւավորման շնորհիվ: Իրենց խաղի մեջ պատանիները միաձույլ եւ ներդաշնակ էին կերպարներին՝ դուրս այս իրականությունից, տրված ժոնգլյորի թափառիկ կյանքի ազատ տարերքին:

Բեմադրության գեղ. ղեկավար Արա Աթայանին հաջողվել էր իրականացնել իր առաջ դրված խնդիրները՝ ներկայացնել միջնադարյան Ֆրանսիան՝ ասպետականությունը, տուբադուրների արվեստը, վանական մշակույթը եւ հիմնականում կյանքի աշխարհիկ բազմազանության (խաբուսիկ, միրաժային) եւ հոգեւոր, վանական ճգնակյաց կյանքի հակադրությունը:

Մ. ԲԱՂԱԼՅԱՆ

«Ադամգրքերի» նոր ուսումնասիրություն

Երուսաղեմի հրեական համալսարանի հայագիտության բաժինը Բելգիայում լույս է ընծայել պրոֆ. Մայքլ Սբոնի «Հայկական տարականոն «Ադամգրքերի» համաբարբառը» գիրքը: Ինչպես եբրայագիտության, այնպես էլ քրիստոնեական եկեղեցական գրականության մեջ կարեւոր տեղ է գրավել «Ադամի» թեման: «Ադամգիրքը» միջնադարյան հայ գեղարվեստական արձակ ստեղծագործություն է Ադամի եւ Եվայի առասպելի մասին: Առանձնապես հայտնի է 15-րդ դարի Տաթեւյան դպրոցի առաջնակարգ եկեղեցական, բանաստեղծ Առաքել Սյունեցու «Ադամգիրքը»՝ կազմված երեք գրքերից: Այդ գրքերից ամեն մեկն առանձին գործ է, բայց երեքն էլ վերաբերում են նույն նյութին՝ Ադամի եւ Եվայի մեղանչմանը ըստ Ս. Գրքի: Այս թեմայով բազմաթիվ ծեռագիր օրինակներ պահվում են Մատենադարանում: Պրոֆ. Մ. Սբոնի նոր գիրքն ավելի դյուրին կդարձնի հայկական «Ադամգրքերի» ուսումնասիրությամբ զբաղվողների աշխատանքը:

Հայկական համալսարանի հայագիտության բաժինը տպագրության է պատրաստում Քրիստինա Մարանսիի «Հայկական ճարտարապետության պատմությունը», Ռոբերտ Թոմսոնի թարգմանությամբ եւ մեկնաբանությամբ «Սոկրատեսի պատմության համառոտ տարբերակը» եւ «Հայերը, Երուսաղեմը եւ Սուրբ երկիրը»՝ Ռոբերտա Իրվինի, Մայքլ Սբոնի եւ Նինա Սբոնի խմբագրությամբ: Վերոհիշյալ գրքերը լույս կտեսնեն մոտակա ամիսներին:

Ռ. Պ.

Ի շահ հայկական ֆուտբոլի

Սա է ֆուտբոլային գործակալ Կարո Խաչիկյանի գործունեության հիմնական նպատակը

Ակումբից ակումբ ֆուտբոլիստների տեղափոխման, պայմանագրերի կնքման գործընթացում մեծ է ֆուտբոլային գործակալների դերը: Բավական բարդ ու պատասխանատու գործունեությամբ են նրանք զբաղվում՝ տնօրինելով ֆուտբոլիստների ճակատագրերը: Ուստի պատահական չէ, որ մինչեւ վերջերս ֆուտբոլային գործակալներին հատուկ արտոնագրեր էր շնորհում միայն ՖԻՖԱ-ն: Ներկայումս այդ իրավունքը տրված է նաեւ ֆուտբոլի ազգային ֆեդերացիաներին: Ֆրանսահայ Կարո Խաչիկյանը բոլորովին վերջերս է գործակալի արտոնագիր ստացել եւ որոշել է իր գործունեությունը սկսել Հայաստանից:

– Կարո, նախ կխնդրեի ներկայանալ:

– Ծնվել եմ Փարիզում 1968 թ.: Ծնողներս Ֆրանսահայեր են, նույնպես Փարիզում են ծնվել, իսկ պապերս արեւմտահայեր են, եղեռնից հազիվ մազապուրծ եղած հայտնվել են Հունաստանի որբանոցներում, հետագայում տեղափոխվել են Ֆրանսիա: Ընտանիքում ամեն ինչ արվում էր, որպեսզի ես եւ եղբայրս հայ մնանք, շարունակենք հայկական ավանդույթները, չնայած Ֆրանսիայում դա անելը շատ դժվար է: Բնակվում եմ Փարիզի մերձակայքում գտնվող Ալֆորվիլ քաղաքում: 30 հազար բնակչությունից 7 հազարը հայեր են, կա հայկական դպրոց, գործում են Սուրբ Մեսրոպ լուսավորչական եկեղեցին, հայկական մշակույթի տունը, հայկական ռադիոկայանը:

Ավարտել եմ համալսարանը, ստացել պատմաբան-քաղաքագետի մասնագիտություն: Արդեն 10 տարի հանդես եմ գալիս Ֆրանսիայի ՀՄԸՄ ֆուտբոլային թիմում, որտեղ բացառապես հայեր են ընդգրկված: Մարզիչն էլ բոլորին քաջ հայտնի «Արարատի» նախկին դարպասապահ Նորայր Դեմիրճյանն է: Թիմը խաղում է Ֆրանսիայի առաջնության ցածր դիվիզիոնում:

– Ինչո՞ւ եւ ինչպե՞ս դարձար ֆուտբոլային գործակալ:

– Արդեն 33 տարեկան եմ եւ ժամանակ է հրաժեշտ տալ մեծ ֆուտբոլին ու մտածել հետագայի մասին: Ֆուտբոլի նկատմամբ մեծ սերը, ֆուտբոլային գործունեությամբ զբաղվելու ձգտումը պատճառ հանդիսացան գործակալի մասնագիտությունն ընտրելու հարցում: 8 ամիս նախապատրաստվել եմ քննություններին՝ ուսումնասիրելով ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերը, գործակալներին ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Նշեմ, որ քննություն հանձնելն այնքան էլ դյուրին գործ չէր: Մեր խմբի մոտ 100 անդամներից միայն կեսը հաջողությամբ հանձնեց քննությունները եւ ՖԻՖԱ-ի գործակալի արտոնագիր ստացավ:

– Հաստատե՞լ ես գործարք կնքել:

– Դեռ ոչ: Գործունեությունս նոր եմ սկսել, այդ նպատակով էլ ժամանել եմ Հայաստան:

– Իսկ ինչո՞ւ որոշեցիր սկսել Հայաստանից:

– Ցանկությունս մեկն է, օգնել իմ հայրենակիցներին այլ ակումբներ տեղափոխվելու հարցում: Սա կարելի է ասել, նախապատրաստական փուլն է, որի նպատակն է նախ՝ կարող հաստատել Ֆրանսիայի առաջին եւ երկրորդ դիվիզիոնի թիմերի հետ, տեղեկանալ նրանց պահանջներին, իսկ Հայաստանում՝ ծանոթանալ պայմաններին, ֆուտբոլիստների խաղային ունակություններին, փորձել հասկանալ այստեղի համակարգը:

– Շուրջ երկու շաբաթ Հայաստանում ես: Կխնդրեի տեղեկացնել այցի արդյունքների մասին:

– Հանդիպել եմ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Սուրեն Աբրահամյանի, տարբեր ակումբների նախագահների եւ մարզիչների հետ: Ներկա եմ գտնվել «Փյունիկ»-«Շիրակ», «Փյունիկ»-«Միկա» հանդիպումներին, ինչպես նաեւ առանձին թիմերի պարապմունքներին: Բացի այդ, դիտել եմ ազգային եւ երիտասարդական հավաքականների խաղերի տեսաժապավենները: Դրանք հնարավորություն ընձեռեցին որոշակի պատկերացում կազմել Հայաստանի ֆուտբոլիստների խաղային ունակությունների, նրանց վարպետության մակարդակի մասին: Անկեղծ ասած, «Փյունիկի» խաղն առանձնակի տպավորություն չթողեց, երեւի պատճառն այն է, որ թիմն արդեն չեմպիոն էր դարձել, եւ ֆուտբոլիստները խաղին ինչպես հարկն է չէին տրամադրվել: Պետք է խոստովանեմ, որ հայ ֆուտբոլիստները Ֆրանսիայի առաջին դիվիզիոնում չեն կարող խաղալ: Իսկ ահա, մնացած դիվիզիոնների թիմերում ընդգրկվելու հնարավորություն կա: Ճիշտ է, դրա համար անհրաժեշտ աշխատանք պետք է տարվի: Նախ, ֆրանսիական թիմերը պետք է ցանկություն հայտնեն իրենց կազմում Հայաստանից ֆուտբոլիստներ ընդգրկելու: Մյուս կողմից էլ այստեղի թիմերի նախագահները պետք է համաձայնեն իրենց ֆուտբոլիստին վաճառել: Դժվար խնդիր է ֆուտբոլիստի տրանսֆերային գնի հարցում համաձայնություն ձեռք բերելը: Նաեւ պետք է տեղեկանալ, թե ֆուտբոլիստն արդյոք պայմանագիր ունի՞, թե այն ավարտվել է: Մի խոսքով՝ կարելի է ասել, որ այս այցը հիմնականում տեղեկատվական նպատակ էր հետապնդում:

– Իսկ ֆուտբոլիստների հետ չե՞ս հանդիպել:

– Ցանկանում եմ, որ ամեն ինչ օրինական ձեւով ընթանա, դրա համար էլ նախ նախագահներին հանդիպեցի: Ֆուտբոլիստների հետ եւս հանդիպել եմ, հիմնականում՝ նրանց ցանկությամբ:

– Քեզ օգնելու նպատակով տեղեկացնեմ, որ հայ ֆուտբոլիստները հիմնականում մեկնում են Լիբանան, Իրան, ինչպես նաեւ Ռուսաստան: Չե՞ս փորձել կարող հաստատել այդ երկրների թիմերի հետ:

– Իմ հիմնական նպատակը ֆրանսիական թիմերում հայ ֆուտբոլիստների ընդգրկումն է: Սակայն անհրաժեշտության դեպքում կարող եմ կարող հաստատել ձեր նշած երկրների հետ, թեեւ արաբերենի չիմացությունը որոշակի դժվարություններ կառաջացնի: Բայց կարելի է կարվել տեղի գործակալների հետ, համագործակցել նրանց հետ:

– Մարզիչների ընտրությամբ գործակալները չե՞ն զբաղվում:

– Անշուշտ, զբաղվում են, բայց ես ցանկանում եմ գործունեությունս սկսել ֆուտբոլիստներից:

– Հաճախ տրանսֆերային բարձր գները խոչընդոտում են ֆուտբոլիստների թիմից թիմ տեղափոխվելը:

– Ճիշտ եք նկատել: Որոշ ակումբների նախագահներ ցանկանում են միանգամից հարստանալ՝ ֆուտբոլիստների համար բարձր գին պահանջելով, դրանով իսկ ազդելով նրա ճակատագրի վրա: Նրանք պետք է գիտակցեն, որ նման դեպքերում պետք է առաջնային լինի ֆուտբոլիստի շահը, նրան կատարելագործվելու, վարպետությունը բարձրացնելու հնարավորություն ընձեռել: Այսպիսի դեպքերում մեծ է գործակալի դերը ֆուտբոլիստի շահերը պաշտպանելու հարցում:

– Հանդիպումների ընթացքում թիմերի համար լեգեոներների ընտրություն կատարելու, հավաքականի համար խաղացողներ փնտրելու առաջարկներ չեղա՞ն:

– Կոնկրետ առաջարկներ չեղան: Գուցե դեռեւս թերահավատորեն են ինձ վերաբերվում, կամ էլ ֆինանսական միջոցները չեն ներում: Օրինակ, «Փյունիկի» ղեկավարության հետ հանդիպումից հասկացա, որ ուզում են պահպանել թիմի կազմը, այն ավելի հզորացնել ի հաշիվ լեգեոներների՝ նախապատրաստվելով չեմպիոնների լիգայի մրցաշարին: Եթե կցանկանան, կարող եմ հետաքրքրվել ֆրանսիական թիմերի խաղացողներով, կան նույնիսկ մի քանի հայ ֆուտբոլիստներ, որոնք նույնիսկ հավաքականում կցանկանան խաղալ: Այնպես որ, պատրաստ եմ ցանկության դեպքում օգնել:

– Ներկայումս Ֆրանսիայում հանդես է գալիս Տիգրան Եսայանը, իսկ Աշոտ Խաչատրյանն աշխատում է որպես մարզիչ: Ճանո՞թ ես նրանց:

– Տիգրանի մասին տեղյակ էի, որ խաղում է ԱԶԱ թիմում, լավ տպավորություն է թողնում, թեեւ շուտով 30 տարեկան կդառնա: Սակայն հետը ծանոթ չեմ, Ֆրանսիա վերադառնալուն պես անպայման կհանդիպեմ, կխոսեմ հետը հետագա ծրագրերի մասին: Աշոտի հետ այս ամառը ծանոթացանք: Նա պետք է լիներ Համահայկական 2-րդ խաղերի մասնակից Փարիզի ֆուտբոլային թիմի պատասխանատուն, սակայն չկարողացավ Հայաստան գալ: Ես այդ թիմի կազմում մասնակցեցի Համահայկական խաղերին:

– Փաստորեն, սա քո երկրո՞րդ այցելությունն է Հայաստան:

– Ոչ, արդեն չորրորդը: Առաջին անգամ Հայաստան եմ այցելել այն դժվարին տարիներին՝ 1992 թ. հունիսին: Գնացի Ղարաբաղ, Շուշին նոր էր ազատագրվել, շատ հիշարժան օրեր էին ինձ համար: Հաջորդ տարի օգոստոս-սեպտեմբերին, ուսանողական արձակուրդի ժամանակ եմ գտնվել Երեւանում: Անցած այս ժամանակահատվածում Երեւանը շատ է փոխվել, գեղեցկացել, կյանքն էլ, կարծում եմ, բարելավվել է, թեեւ դժվարություններ շատ կան: Ես ծանոթացա ֆուտբոլային տնտեսությանը, պայմանները շատ սուղ են, բայց այստեղ էլ առաջընթացը նկատվում է: «Հանրապետական», «Հրազդան» մարզադաշտերի վերակառուցումը, ֆուտբոլի դպրոցներում կատարվող փոփոխությունները վկայում են, որ ուշադրություն է դարձվում նյութատեխնիկական բազային, ինչը ֆուտբոլի զարգացման նախապայմանն է:

– Ե՞րբ ես ծրագրել հաջորդ այցդ Հայաստան:

– Գարնանը: Այն ժամանակ կգամ կոնկրետ առաջարկություններով եւ, կարծում եմ, կարելի կլինի խոսել գործարքների կնքման մասին:

ՖՈՒՏԲՈԼ

Միջմայրցամաքային գավաթը «Բավարիային»

Տոկիոյի օլիմպիական մարզադաշտում Միջմայրցամաքային գավաթը վիճարկեցին եվրոպական երկրների չեմպիոնների գավաթակիր Մյունխենի «Բավարիան» եւ Լիբերտադորեսի գավաթի խաղարկության հաղթող արգենտինական «Բոկա Հունիորը»: Խաղի հիմնական ժամանակում դարպասները մնացին անառիկ: Իսկ ահա լրացուցիչ ժամանակում հաջողությունն ուղեկցեց «Բավարիային»: 110-րդ րոպեին Սամուել Կուֆուրի խփած միակ գնդակը հաղթանակ պարգեւեց «Բավարիային», որը երկրորդ անգամ (նախկինում՝ 1976 թ.) նվաճեց Միջմայրցամաքային գավաթը: Նշենք, որ «Բավարիան» 4-րդ անգամ էր վիճարկում պատվավոր մրցանակը: Հաղթանակն ավելի ծանրակշիռ է այն առումով, որ «Բավարիան» պարտության մատնեց գավաթի նախորդ խաղարկության հաղթողին: Հիշեցնենք, որ անցյալ տարի «Բոկա Հունիորը» Տոկիոյում 2-1 հաշվով հաղթել էր Մադրիդի «Ռեալին»: Արգենտինական թիմը եւս երկու անգամ (մինչ այդ՝ 1977 թ.) դարձել է պատվավոր մրցանակի դափնեկիր:

25-րդ տուրը թվերով եւ փաստերով

Նոյեմբերի 24-26-ը կայացած 6 հանդիպումներում խփվել է 18 գնդակ: Առաջնության 123 խաղերում գրանցվել է 432 գոլ: Միջին արդյունավետությունը կազմում է 3,51 գոլ:

■«Միկան» ՀՀ առաջնություններում «Փյունիկի» նկատմամբ անդրանիկ հաղթանակը տոնեց: Նորընծա չեմպիոնն այդ տիտղոսը նվաճելուց հետո անցկացրած 2 խաղում վաստակել է 1 միավոր՝ չկարողանալով գեթ մեկ գնդակ խփել: Ընդհանրապես 2-րդ շրջանում «Փյունիկը» որոշ չափով վաստակել է իր ցուցանիշները: Այսպես, եթե մեկնարկային 10 հանդիպումներում թիմը վաստակել էր 27 միավոր (9 հաղթանակ, 1 պարտություն) խփելով 46 գնդակ, ապա 2-րդ շրջանի նույնքան հանդիպումներում իր օգտին գրանցել է 23 միավոր (+7=2-1) խփելով կրկնակի անգամ փոքր գոլեր (23):

■«Զվարթնոցը» 2-րդ շրջանում շարունակում է հաղթարշավը՝ որոնելով խոշոր հաշվով 4-րդ հաղթանակը: Առաջնության երկրորդ կեսում վաստակած միավորների քանակով (27) «Զվարթնոցն» ունի լավագույն արդյունքը: «Լեռնագործի» հետ անցկացրած 5-րդ խաղն էլ ավարտվեց «Զվարթնոցի» հաղթանակով: «Լեռնագործն» ընթացիկ մրցաշրջանում խոշոր հաշվով 9-րդ պարտությունը կրեց:

■6 խաղ առանց հաղթանակի ընթացող «Արարատը» վերջապես ճաշակեց հաղթանակի քաղցրությունը: ՀՀ առաջնություններում «Դինամոյի» հետ անցկացրած բոլոր 5 խաղերն էլ ավարտվել են արարատցիների հաղթանակով: Իսկ «Դինամոն» արդեն 14 խաղ է, չի հաղթել (+0=3-11): Թիմը 5-րդ անընդմեջ պարտությունը կրեց, ընդ որում վերջին 4 խաղերում գոլ չի խփել:

■«Բանանցը» խոշոր հաշվով 6-րդ հաղթանակը տոնեց, իսկ «Կոտայքը» նման կարգի 8-րդ պարտությունը կրեց: «Բանանցը» 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: 2-րդ շրջանում թիմն անհավասար ելույթներ ունեցավ: Եթե առաջին 6 հանդիպումներում «Բանանցը» տանուլ տվեց, ապա հաջորդ 5 խաղերում տոնեց 4 հաղթանակ, 1 խաղ էլ ավարտեց ոչ-ոքի:

■«Շիրակի» ավագ Հովհաննես Թահմազյանը «Ղարաբաղի» հետ խաղում պաշտոնական մրցումներում հոբելյանական 300-րդ հանդիպումն անցկացրեց: Նա դարձավ «300-ի ակումբի» 3-րդ անդամը Արթուր Պետրոսյանից եւ Վարազդատ Ավետիսյանից հետո: Հոբելյանը Թահմազյանը նշեց գոլով, որն առաջինն էր ընթացիկ մրցաշրջանում եւ 30-րդը ՀՀ առաջնություններում:

■Մեկ այլ շիրակցի՝ Տիգրան Դավթյանը, խփեց 9-րդ գնդակը եւ այժմ «Շիրակի» լավագույն ռմբարկուն է ընթացիկ առաջնությունում:

Մկրտիչ Հովհաննիսյանի խփած հերթական գոլը 90-րդն էր պաշտոնական մրցումներում (81-ը՝ ՀՀ առաջնություններում, 9-ը՝ գավաթի մրցաշարերում):

■«Լեռնագործի» ֆուտբոլիստ Ռոմիկ Սիմոնյանը խփելով 18-րդ գնդակը, ընդգրկվեց «100 ռմբարկուների» ցանկում:

■«Միկայի» կիսապաշտպան Գրիգոր Մկրտչյանը միայն ավարտական տուրում բացեց իր գոլերի թիվն ընթացիկ առաջնությունում: Վարազդատ Ավետիսյանից եւ Սամվել Նիկոլյանից հետո նա դարձավ 3-րդ ֆուտբոլիստը, որը գոլի հեղինակ է դարձել բոլոր 10 առաջնություններում:

Բեյրութի ՀՄԸՄ-ն Հայաստանում

Արդեն մի քանի օր ֆուտբոլի Լիբանանի առաջնությանը նախապատրաստվող Բեյրութի ՀՄԸՄ-ն գտնվում է Հայաստանում: Թիմի ղեկավարությունը նպատակահարմար է գտել դեկտեմբերի 15-ին մեկնարկող ֆուտբոլային նոր մրցաշրջանի նախապատրաստության ավարտական փուլն անցկացնել Հայաստանում: Թիմի ֆուտբոլիստները հանգրվանել են Արարատի «Այգ» մարզաբազայում, որտեղ հիանալի պայմաններ են ստեղծված ուսումնամարզական հավաքների անցկացման համար: ՀՄԸՄ-ն գլխավոր մարզիչ Գեւորգ Կարապետյանի գլխավորությամբ ամենօրյա մարզումներ է անցկացնում: Նախատեսված են նաեւ ընկերական մի քանի հանդիպումներ, որոնք հնարավորություն կտան մարզիչներին փորձարկելու ֆուտբոլիստներին, ստուգելու նրանց խաղային որակները:

Բաժինը վարում է
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հեռանկար

«Այս տարի հայ-թուրքական սահմանում սադրանք չի արձանագրվել»

Գեներալ Պանկովի ասուլիսը

Աֆղանստանում հակահաբեկչական գործողության ծավալման կապակցությամբ ուժեղացվում են Թուրքիայի եւ Իրանի հետ Հայաստանի սահմանները: Այդ մասին Ինտերֆաքսին հայտնեց Հայաստանում Ռուսաստանի դաշնային սահմանապահ ծառայության օպերատիվ խմբի շտաբի պետ Վլադիմիր Պանկովը: Նրա խոսքերով, այսօրվա դրությամբ ռուսաստանցի սահմանապահներն ահաբեկչության որեւէ դրսեւորում չեն բացահայտել Հայաստանի սահմանի այդ հատվածների անցակետերում եւ կանաչ գծի վրա:

Երեւանում ելույթ ունենալով մամլո ասուլիսում, ռուսաստանցի գեներալը նշեց, որ 2001 թ. անցած 11 ամիսներին «ռուսաստանցիների կողմից պաշտպանվող սահմանահատվածում ընդհանուր իրավիճակը կայուն է եւ առանձնակի փոփոխություններ չի կրել»: Դրա հետ մեկտեղ, այդ ժամանակամիջոցում ռուսաստանցի սահմանապահները բռնել են 63 սահմանախախտների (այդ թվում 23-ը դեմի Հայաստան, 40-ը դեմի դուրս շարժված): 64 մարդ կալանավորվել է սահմանային ռեժիմի խախտման համար: Սահմանային անցակետերը հատել է 181708 մարդ, այդ թվում 99 հազար օտարերկրացի: 596 անձանց փաստաթղթերը կարգին չեն եղել, նրանցից 323-ին չի թույլատրվել հատել սահմանը: Սահմանի վրա բռնագրավվել են տարբեր տրամաչափի 1975 փամփուշտ, որոնք ֆանակությամբ պայթուցիկ նյութեր եւ մոտ 20 միավոր սառը զենք: Շտաբի պետի խոսքերով, անցյալ տարվա նույն ժամանակամիջոցի ցուցանիշների համեմատ այս տարի չի արձանագրվել խախտումների կտրուկ աճ: «Այսօրվա դրությամբ զորամասերի եւ միավորումների պատրաստության մակարդակը եւ մարտավիճակն ու համալրվածությունը թույլ տվեցին հաջողությամբ լուծել սահմանապահներին առաջադրված խնդիրները», հայտարարեց Վ. Պանկովը: Նրա խոսքերով, Հայաստանում ռուսաստանյան սահմանապահ զորամասերը համալրվում են 50+50 սկզբունքով՝ տեղացիներից եւ ռուսաստանցիներից: Հայաստանում ռուսաստանցի սահմանապահները կենցաղային որեւէ խնդիր չունեն. հարկաբաժնում տաք է, սնունդն էլ լավ է:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական սահմանի իրավիճակին, թեեւ ավանդաբար լարված է համարվել, բայց այս տարի, ինչպես նշեց ռուսաստանցի գեներալը, դիտվում է ջերմացման միտում: «Այս տարի հայ-թուրքական սահմանում որեւէ սադրանք չի արձանագրվել»:

Ներկայումս Հայաստանի սահմանը պահպանվում է սահմանապահ զորքերի կարգավիճակի վերաբերյալ 1992 թ. Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների կնքած պայմանագրի հիման վրա: Ռուսաստանի սահմանապահների պահպանած սահմանի երկարությունը կազմում է 373 կմ, որից 328-ը Թուրքիայի հատվածն է, 45-ը Իրանի:

Մամլո ասուլիսից հետո մի խումբ լրագրողներ մեկնեցին Մեղրի, որտեղ Հայաստանում Ռուսաստանի դաշնային սահմանապահ ծառայության (ՌԱԾ) օպերատիվ խմբի նախաձեռնությամբ «բաց դռների օր» կանցկացվի ՀՀ զանգվածային լրատվամիջոցների համար: Լրագրողները կկարողանան հանդիպել ՀՀ-ում ՌԴ ՌԱԾ օպերատիվ խմբի հրամանատարության եւ սահմանապահ ջոկատի հետ, լինել սահմանային ուղեկալում եւ «Կարճեւան» անցակետում, զրուցել Սյունիքի մարզպետի եւ Մեղրիի ու Ագարակի քաղաքապետերի հետ:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայաստանում Ինտերֆաքսի
սեփ. թղթակից
«Ազգի» համար

ԱՇԽԱՐՀ

Մարդկային սաղմը առաջին անգամ կենսապատճենահանվեց

Ինտերնետային ցանցի նյութերի համաձայն, «Advanced Cell Technology» բջիջների առաջավոր տեխնոլոգիաների ամերիկյան ընկերությունն աշխարհում առաջին անգամ հաջողությամբ կենսապատճենահանել է մարդկային սաղմը, որով հնարավորություն է ստեղծվում անսահմանափակ քանակությամբ առողջ օրգաններ ստանալ փոխպատվաստումներ կատարելու համար:

Ընկերության նախագահ դոկտ. Մայքլ Ուեսթն ասել է «NBC» հեռուստաընկերության լրագրող Թիմ Ռասերտին, որ գիտության այս առաջընթացը նոպատակ ունի «փրկելու մարդկանց կյանքը»: «Մենք անհատներ չենք ստեղծում, այլ բջջային կյանք», ավելացրել է նա: Իսկ «NBC»-ի բժշկական հարցերով գլխավոր թղթակիցը նշել է, որ նրանց համար, ովքեր ուշի-ուշով հետեւում էին զարգացումներին, նոր հայտնությունը «բոլորովին զարմանալի չէր»: Նա բացատրեց, որ խոշոր քայլ է կատարված, եւ ստացված սաղմը ցանկացած կնոջ արգանդ ներմուծելով, կարելի է ստանալ բջջային դոնորի հարազատ նմանակին:

Սակայն մի շարք սենատորներ՝ Պատրիկ Լիհին, Ռիչարդ Շելբին եւ ուրիշներ, խիստ անհանգստություն արտահայտելով կատարվածի մասին, պահանջել են, որ Կոնգրեսը անհապաղ իր վերաբերմունքը ցուցաբերելով, անօրինական համարի մարդկային սաղմերի կենսապատճենավորումը:

«Մենք կարծում ենք, որ ինչ-որ բան խորտակվում է», ասել է Լիհին, ավելացնելով, որ գիտնականները փոխպատվաստման համար այլ միջոցներով կարող են ստանալ անհրաժեշտ օրգանները: Օրենսդիրները համարում են, որ բարոյական եւ էթիկական տեսակետից կատարվածը անթույլատրելի է:

Հ. Օ.

Անգլիայի թագուհին փնտրում է ֆինանսների կառավարիչ

Մեծ Բրիտանիայի էլիզաբեթ Բ թագուհին «Սանդի թայմս» թերթի վերջին համարում զետեղել է հայտարարություն, ըստ որի ինքը ֆինանսների նոր կառավարիչ է փնտրում իր ունեցվածքի տնօրինման համար: Թագուհու ունեցվածքը գնահատվում է 1,15 մլրդ ֆունտ ստեռլինգ (1,62 մլրդ դոլար): Նրա ներկայիս ֆինանսական սր Մայքլ Փիթը 2002 թ. օգոստոսին թողնելու է Բուքինգհեմյան պալատը, որտեղ զբաղեցնի գահաժառանգ իշխան Չառլզի անձնական քարտուղարի պաշտոնը: Արքունիքում իր գործունեության տարիներին Մայքլ Փիթն աչքի ընկավ նրանով, որ կրճատեց թագավորական ընտանիքի ամենամյա ծախսերը, 17 մլն ֆունտից իջեցնելով 5,4 միլիոնի: Փիթը նաեւ առաջին կառավարիչն էր, որ թագուհուն խորհուրդ տվեց եկամտահարկ վճարել:

Ֆրանսպրեսը տեղեկացնում է, որ էլիզաբեթ Բ թագուհին բավական հարուստ է, բայց շատ ավելի հարուստ է Բրունեյի սուլթանը, որի ունեցվածքը գնահատվում է 17 մլրդ ֆունտ: Իսկ Սաուդյան Արաբիայի թագավորը միապետներից ամենահարուստն է. նրա ունեցվածքը գնահատվում է 32 մլրդ ֆունտ կամ 45 մլրդ դոլար:

Պ. Բ.

Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժին

1991-2001 ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿ

Դասախոսությունների շարք ծրագիր

Երեւանի քաղաքապետ
Ռոբերտ Նազարյանը
ներկայացնում է՝

«Համայնքային կառավարման առանձնահատկությունները Հայաստանում»

Չորեքշաբթի. նոյեմբերի 28-ին. 2001 թ. ժամը 18.00-ին. Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում

Դասախոսությունը կընթանա հայերենով
Մուտքն ազատ է

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել

512707

INDEPENDENT CONSULTING

Դուք գիտեք ինչ
Մենք գիտենք
ինչպես

«Այ Սի էյ Տի» անկախ խորհրդատվական խումբն առաջարկում է իր ծառայությունները

- Հարկային եւ այլ պարտադիր վճարումների վերաբերյալ խորհրդատվություն
- Ֆինանսահաշվապահական ծառայություններ եռամսյակային հաշվետվությունների, տարեկան հաշվեկշռի կազմում, հաշվապահական հաշվառում
- բիզնես պլանների մշակում.
- մրցութային փաստաթղթերի փաթեթների կազմում
- մնացեալ սուբյեկտների, իրավաբանական եւ ոչ իրավաբանական, հասարակական կազմակերպությունների գրանցում, վերագրանցում եւ լուծարում
- իրավաբանական խորհրդատվություն եւ ծառայություն:

Մեր հասցեն
Բաղրամյան 3ա

Հեռ.՝ 54-37-31,
Հեռ. ֆաքս՝ 58-31-50

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

Արդշինբրոք ՍՊԸ
ք. Երեւան, Թումանյան 28/20
Հեռ.՝ 542674

Արմենբրոկ ՓԲԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 528966

Գլոբալաս ՍՊԸ
ք. Երեւան, Ոսկանյան 21, բն. 41
Հեռ.՝ 454112, (09) 429412

Դամոս ՍՊԸ
ք. Երեւան, Ե. Քոչար 21/1, բն. 37
Հեռ.՝ 571218

Արժեթղթեր Կենտրոն ՍՊԸ
ք. Երեւան, Հանրապետության 5բ
Հեռ.՝ 525801, 581578

Ամրոքրոք ՍՊԸ
ք. Երեւան, Կոմիտաս 22/50
Հեռ.՝ 222725, 278469

Գլխիանյան Բրոքեր ՍՊԸ
ք. Վանաձոր, Գ. Լուսավորչի 45ա
Հեռ.՝ (051) 40297

Գլոբ Եռգրանցի ՍՊԸ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
Հեռ.՝ (051) 22422

Գրեի Բրոք Դիլ Տրաստ ՍՊԸ
ք. Երեւան, Հալաբյան 47, բն. 31
Հեռ.՝ 348837

Գոլդ-Գլոբալ ՓԲԸ
ք. Երեւան,Գ. Լուսավորչի 15/1
Հեռ.՝ 525822

Երեւան-Բրոքեր ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 524357, 151820

Էյթեն-Գլոբալ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50, բն. 26
Հեռ.՝ 528232, 540914

Գլոբասթրա ՓԲԸ
ք. Երեւան, Չարյան 8, բն. 30բ
Հեռ.՝ 567767, 582478, 562404

Կարդինալ Գլոբալ ՍՊԸ
ք. Երեւան, Ազաթանգեղոսի 7
Հեռ.՝ 569680, 526417

Կարդինալ Սենթրենթ ԲԲԸ
ք. Երեւան, Ամիրյան 2/8
Հեռ.՝ 560138

Կարդինալ Տրաստ ՓԲԸ
ք. Երեւան, Գ. Լուսավորչի 15/1
Հեռ.՝ 580745

Մ.Գ.Ս. ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 242-1
Հեռ.՝ (041) 22184, (051) 23109

Լոռի-Վեստ-Գլոբալ ՍՊԸ
ք. Գյումրի, Աբովյան 247
Հեռ.՝ (041) 30868

Պրիմա Գլոբալ ՓԲԸ
ք. Երեւան, Նալբանդյան 50/ 26
Հեռ.՝ 521812, 521051, 528778

Սարբոլ ՍՊԸ
ք. Երեւան, Գայի 24
Հեռ.՝ 630480, 542547

Վրինկո ՍՊԸ
ք. Երեւան, Ամիրյան 24, բն. 5
Հեռ.՝ 531805

Տոնսոն ՍՊԸ
ք. Երեւան, Դեղատան 2
Հեռ.՝ 545477, 545407

Օրիգինալ Գլոբալ ՓԲԸ
ք. Երեւան, Վարդանանց 5ա
Հեռ.՝ (09) 420449

Armex

Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2001 թ. նոյեմբերի 27-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Հաղ. ABBR	Դասակ Listed	Գնում* Bid: լավագույն գին Best price	Գնում*: միջ. կշռ. գին Avg. price	Գնում*: ֆանակ Total qnt.	Վաճառք* Ask: լավագույն գին Best price	Վաճառք*: միջ. կշռ. գին Avg. price	Վաճառք*: ֆանակ Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: նվազ. գին Day low	առավ. գին Day high	միջ. կշռ. գին Avg. price	փոփ.% Avg%	ծավալ (դրամ) Volume
ՇԱՓԻՐ-1 (ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)	ACHI	B											
ԱՐԱՓԱԾ ԲԱՅԱԲԱԿԱՊԱՐԾԿ. ԱՄՍ	AGBM	B											
ԱՅՐՈՒՄԻ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՌ	APAH	B											
ԱՊԱՍԵԿՈՒՄԻՉ	APAK	B											
ԱՐԴՎԻՆ ԷԼ.ՍԵՂ.ԳՌ ԽՍՆԱՁՈՐ)	ARDV	B											
ԱՐՇԱԼՈՒՅՍ	ARSL	B											
ԱՐՏԵՔՍ	ARTX	B											
ԱՐՓԱՍԵՎԱՆ	ASEV	B	1,000.0	1,000.0	1								
ԱՍՏԿԱՌՄԱԼ (ԱՐԹԻԿ)	ASTM	B											
ԱՎՏՈՎԱԳԵԳԱՏՆԵՐԻ ԳՌ	AVAG	B											
ԱՎԻԱՀԱՍԱԼԻՐ	AVHM	B	90.0	90.0	80								
ԱՎՏՈԲԵՌԻՉ	AVTB	B											
ԱՎՏՈՄԱՏԻԿԱ ԳՌ	AVTM	B	300.0	300.0	1								
ԻՆՏԵՎԱՆԻ ԲԵՆՏՈՆԱՏ Կ/Տ	BENT	B											
ԲՀԵՍ.ՊԼԱՅՄԱ	BHSP	B											
ՉԱՐԵՆՏ ԳՈՐԾԻՔԱՇԻՆ. ԳՌ	CHGG	B											
ԿԱՊԻՏԱԼ ՍԵՆԵՏՄԵՆԹ	CPMT	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ԱՐՏ. ՅՐ ՍՄԿ	DAJK	B											
ՈՒՍՏԱԿԵՐՏԻ ԲՈՒԺՏԵՂ. ԳՌ	DBJG	B											
ԴԱԼԻՋԱՆԻ ԱՌՈՂՋ. ՀՌ	DJAH	B											
ՉՈՒԼԱԿԵԼՏՐՈՆ	DZKT	B	400.0	400.0	10								
ԷԼԵԿՏՐԱԿԵՂՐԻՏՍԱՐՔ	ECHS	B											
ԷՅՄՌԱԾԻ ՍԱՐՔԱՇԻՆ. ԳՌ	ECSG	B											
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺՇՆԵՐԻ ԳՌ	EELJ	B											
ԵՐԾԻՐԶ	EFRZ	B	1,400.0	1,400.0	3								
ԵՐ ՀԻԴՐՈՀԱՂՈՐԴԱԿ ԳՌ	EHHG	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՌ	EJWG	B											
ԵՐԿԱԹԵՏՈՒ.7	EKB7	B											
ԵՐ ԿՈՇԵ ԳԱԼՍՏԵՐԵԱՅԻ Ֆ/Ս	EKGF	B	1,080.0	1,080.0	10								
ԵՐ ԿԵՆՏՐՈՆԱՅԻՆ ՔԻՄԻԱՅԻ ԳՌ	EKQG	B	400.0	400.0	100	900.0	900.0	33					
ԷԼԵԿՏՐԱՊԱՐԱՏ	ELAP	B	470.0	470.0	10								
ԷԼԵԿՏՐԱՄՈՆՏԱԺ	ELMJ	B											
ԵՐ ԼՈՒՍՏԵՌՆԻԿ	ELUS	B											
ԵՊՀԱՐԻ ՄԱՐԶԱԿՈՒԻԿՆԵՐԻ Ֆ/Ս	EMKFCO	B	500.0	500.0	100								
ԷԼԵԿՏՐԱՍԵՔՍ	EMQR	B											
ԵՅԱՍ	EMTA	B											
ԷՅՄՌԱԾԻ ՊԼԱՍՏԱՍ. ԳՌ	EPLG	B											
ԵՌԱԶ	ERAZ	B											
ԵՐ. ԺԱՄԱՆԱԿՅԱՅԻ ԳՌ	ERJG	B	1,350.0	1,350.0	12								
ԵՐԿԱԹԵՏՈՒ	ERKB	B											
ԵՐ. ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՌ	ESHG	B	450.0	450.0	129								
ԱԼԱՀԻՏ ԾԵԼ. ԳՌ (ԵՐԵՎԱՆ)	ETCG	B	1,000.0	1,000.0	5								
ՎԱՆ ԱՅ (ԵՐԵՎԱՆ)	EVAF	B											
ԵՐ. ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՌ - 1	EVGI	B											
ՄԱՆԻՎ	GANV	B											
ԳՈՐԾԻՔ ԳԱՄՄԱ	GGAM	B											
ԳԵԳԱՄԱ	GGMA	B											
ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍ ՊԱՀԱԾՈՆԵՐԻ Կ/Տ	GMPG	B											
ՀԱՅԱԳՈՐԾԱՆԿ	HAGB	B											
ՀԱՇԻՇ	HASH	B	100.0	100.0	4,180								
ՀԱՏԻՍ	HATC	B											
ՀԱՅՇՈՒԱՆՈՏ	HATS	B	1,850.0	1,556.5	46	2,500.0	2,500.0	54					
Հ ԷՄ. ՀԱՅԱՍ ԳՐՈՒՊ	HEHG	B	450.0	450.0	10								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	B											
ՀԱՅՔՈՄՄԵՔՍԱՍ	HOMQ	B											
ՀԱՅՔ.ՇԻՆԱՍԱՀԱԳԾ	HSHN	B											
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԳՌ	JHJG	B											
ԿԱՇԻ	KASH	B											
ԿԱՍՈՒՐՋԻՆ	KMSH	B											
ԿՈՆԵԿՏ	KNET	B											
ԿՆԱԿԱ	KNKA	B											
ՌԵԼԵ ԳՌ (ԿԱՊՈՒՏԻ)	KREL	B											
ՄԱՔՈՒՐ ԷՐԿԱԹԻ ԳՌ	MQER	B	2,220.0	2,220.0	5								
ՄՈՐՏՈՒԻՐԻՆ	MRSH	B											
ՄԵՐՇՈՒՄԿՈՎՅԱՆ	MSKV	B											
ՄՈՍԿՈՒ ՏԱԲԿ	MSTB	B	400.0	400.0	7								
ՄԵՏՇԻՆ	MTSH	B											
ԿՈՒԲԱԽԱՇԵՆԻ ՏՐԻԿՈՏԱԺԻ Ֆ/Ս	NBTF	B											
ՆԵՅՐՈՆ	NERN	B											
ՊԼԱՍՏԻԿ	PLAS	B											
ՌՍՏՐ ԳՌ	RSTR	B											
ՌԵԶՈՒՍՏՐ	RZTR	B											
ՍԵԼԵՆԱ	SELN	B											
ՇԻՆՄԵՔԵՆԱՄՈՐՈԳՈՒՍ	SHMN	B											
ԵՐ. ՇՈՒՇԱՆ ՏԵՔՍՏԻԼ Կ/Տ	SHTK	B											
ԿԱՏԱՐՈՂ ՍԱՐՔ ԳՌ	SKSG	B											
ՏԱՍՊ	TASP	B											
ՏԱՎՐՈՍ	TAVR	B											
ՈՒԿՐԻՆ	UKSH	B											
ՍԽԱՓՈՒԱԾ ԲԱՆԿ	UNBK	B											
ՎԱՆԱՁՈՐ ԿՈՇԻԿԻ Ֆ/Ս	VAKF	B											
ՎԱԿՈՒՄՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՍՏ. ԳՌ	VEVG	B											
ՎՇՇԻԿ	VSHK	B											
ՎԻՏԱՄԻՆՆԵՐԻ ԳՌ	VTMG	B											
ԵՐԵՎԱՆ.ԿԱՀՈՒՅՔ	YKHQ	B				8,000.0	8,000.0	1,000					
ԵՐ. ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԳՌ	YPHG	B											
ԵՐ. ՌԵԼԵԻ ԳՌ	YRLE	B											
ԶԱԿԼԵՖՏԵՂԱՇՀՏՈՅ.ՊՐՈՄԵՏԵՅ	ZNGP	B											

* Շրջանառության գնանշումները/տրամադրվածները առանձին հայտերի մասին տեղեկություն առեւտրային նստաշրջանի փակման դրությամբ: Բոլոր գները ՀՀ դրամով.
** 4 կետից կազմված հարաբերությունը դա բաժնետիրական ընկերության հասարակ անվանական բաժնետոմսի հարաբերությունն է: Այն դեպքում, երբ 4 կետից բացի նշված է CO, արդա դա ՍՊԸ-ի բաժնեմաս է:
Այլ տեղեկություններ հրատարակվում են ինտերնետային էջում www.armex.am

© Armex

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 27. 11. 2001 Գինը՝ 100 դրամ